Ազգ
Azg
24 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 216 (4596)
ISSN: 1829-1651

# Հեռվից դիտարկումն ընդունելի է ԵԱՀԿ առաքելության համա՞ր

Նոյեմբերի 23-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը պլանային դիտարկում է անցկացրել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ Հադրութի ուղղությամբ: Դիտարկման առաքելությանը ղարաբաղյան կողմից ուղեկցում էին ԼՂՀ արտաքին գործերի նախարարության եւ ԼՂՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

Ինչպես տեղեկացնում է ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը, դիտարկման ժամանակ կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել: Սակայն ադրբեջանական կողմը, ի տարբերություն ղարաբաղյան կողմի, ԵԱՀԿ առաքելությանը դուրս չի բերել իր առաջնային գծի սահմանները, դիտարկման խմբերը ստիպված են եղել դիտարկումն իրականացնել ավելի հեռավոր տարածությունից:

ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գրասենյակի համակարգող, փոխգնդապետ Իմրե Պալատինուսը (Հունգարիա), ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի (ԳՆԱՆ) դաշտային օգնականներ Քրիստո Քրիստովը (Բուլղարիա) եւ Ժասլան Նուրտազինը (Ղազախստան): Հակառակ կողմից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ ԳՆԱՆ դաշտային օգնականներ Անտալ Հերդիչը (Հունգարիա) եւ Վիլյամ Պրայորը (Մեծ Բրիտանիա): Ա. Հ.

# Կոմանդոս. «Ողբերգությունը վաղուց էր հասունանում»

Գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանի գնահատմամբ՝ հայկական բանակը ժառանգել է խորհրդային բանակի կառուցվածքը՝ իր լավ եւ վատ կողմերով: Թեպետ վատ կողմերից շատերը մինչ այսօր պահպանվում են, սակայն կամքի ուժի պարագայում խնդիրները կհաղթահարվեն: Այս առումով ուսանելի է Իսրայելի օրինակը, որտեղ ոչ միայն հայկական բանակին էլ բնորոշ «դեդովշչինան», այլեւ բազմաթիվ վատ երեւույթները կարճ ժամանակամիջոցում վերացան:

Նրա բնութագրմամբ՝ բանակում տեղի ունեցող իրադարձությունները ողբերգություններ են, որ վաղուց էին հասունանում:



«Մի՞թե հրամանատարները չէին տեսնում, թե ինչ է կատարվում բանակում: Ինչո՞ւ չէին փորձում կանխել: Հրամանատարները չեն ցանկանում թերությունները ցույց տալ, ոչ թե մենք պետք է այդ թերությունները մատնացույց անենք, այլ հրամանատարները գտնեն, փորձեն շտկել, սակայն այսպիսի համակարգի պայմաններում նրանք վախենում են խոսել՝ գիտակցելով, որ խիստ պատժի կենթարկվեն»:

Կոմանդոսի մեկնաբանությամբ՝ միայն զենքով եւ սպառազինությամբ անհնար է ուժեղ բանակ ստեղծել. պատերազմում հաղթում է մարդկային գործոնը, մինչդեռ նման դեպքերի հետեւանքով ամենաուժեղ գործոնը՝ մարդկայինը, թուլանում է: «Ազգի» հարցին ի պատասխան Կոմանդոսն ասաց, որ խորհուրդ տալն ամենահեշտ բանն է, սակայն նախարարը պետք է շեշտը մարդկային գործոնի հարցի վրա դնի ու լուծումներ գտնի: «Ո՞վ է զբաղվում այդ հարցով, ո՞վ է պատասխանատվություն կրում մարդկային գործոնի համար: Պետք է այս հարցը լուծել, այլ ոչ թե մի ավագ լեյտենանտ գտնել ու մի քանի տարով ազատազրկման դատապարտել»:

*Տես էջ 2*

ԱՆՊԱՏԻԺ ՎԱՆԴԱԼԻԶՄ

# Նամակ՝ Ջուղայի խաչքարերի սպանության հանդեպ կույր ու խուլ մնացած ՄԱԿ-ին

Ադրբեջանը հսկայական միջոցներ է ծախսում տարբեր ատյաններում եւ տարբեր միջոցառումների ընթացքում իր տեսակետն աշխարհին մատուցելու եւ հակահայկական հայտարարություններ ընդունելու նպատակով: Սակայն երբ հակահայկական քարոզչությանն ու պատմական փաստերի ակնառու աղավաղումներին ու կեղծումներին ավելանում են «տարածքային պահանջները Հայաստանից», սա արդեն հիմք է տվել ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչին նամակ հղելու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Ըստ ԱԳՆ հաղորդագրության, նոյեմբերի 9-ին ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Կարեն Նազարյանը Պան Կի Մունի ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքին, որ հերթական կեղծարարությամբ լցված բովանդակություն ունեցող նյութեր են տարածվել Ադրբեջանի կողմից նոյեմբերի 19-ին եւ 22-ին: Այդ առնչությամբ Նազարյանը նամակում ընդգծել է, որ Ադրբեջանը միջոց չի խնայում ռասայական ատելություն, թշնամանք սերմանելու հայերի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցչի խոսքերով, ահավոր է, որ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը «սուր է ճոճում» անգամ երեխաների հետ հանդիպումներում՝ հայտարարելով, թե «Հայաստանը պատմական ադրբեջանական տարածք է»: Եվ այսպիսի կեղծումներ Ադրբեջանն անում է շատ հաճախ, դրանց թվում էլ Հայաստանի նախագահի վերջերս արած հայտարարությունը, որի ամերիկյան արձագանքներին անդրադարձել էր նաեւ «Ազգը»:

Այս ամենի կողքին, ըստ Նազարյանի, զարմանալի չէ, որ ատելության հայտարարություններն ուղեկցվում են Ադրբեջանի տարածքում հայկական ժառանգության ոչնչացմամբ: Նախիջեւանում 9-16 դդ. խաչքարերի ոչնչացումը վանդալիզմի օրինակ է, մինչդեռ Հայաստանի բազմաթիվ խնդրանքները՝ անդրադառնալու այդ փաստին, մնում են անպատասխան, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Ադրբեջանը, ըստ նամակի, շարունակում է ուժի դիրքերից հարց լուծելու սպառնալիքները, մինչդեռ եթե Ադրբեջանը հետաքրքրված է հակամարտության կարգավորմամբ, ապա պետք է իր ջանքերն ուղղի ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով ընթացող բանակցություններին իրական, այլ ոչ ձեւական մասնակցություն ապահովելուն:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Եվրոպացի բարեկամները հարցումներ են կատարել Հայաստանում

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Գոլդեն թուլիփ» հյուրանոցում երեկ ամփոփվեցին «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության պատվերով կատարված հանրային կարծիքի հարցման հայաստանյան արդյունքները: Հետազոտությունը կատարվել է Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Հայաստանյան հետազոտությունը, որն ընդգրկել է ե՛ւ մայրաքաղաքը, ե՛ւ բոլոր մարզերը, իրականացվել է 1208 հարցազրույցների միջոցով: Լեռնային Ղարաբաղում անցկացված հետազոտության արդյունքները կհրապարակվեն նոյեմբերի 25-ին:

Երեկ հետազոտության արդյունքները սկզբում ներկայացրեց բրիտանական «Պոպուլուս» ընկերության գործադիր տնօրեն Էնդրյու Կուպերը: «Պոպուլուս» ընկերությունը զբաղվում է հանրային կարծիքի ուսումնասիրություններով: Էնդրյու Կուպերի փոխանցմամբ՝ հետազոտությունը բացահայտում է հետաքրքրական տվյալներ: Հետազոտության հայաստանյան գործընկերը «Այ Փի Էս Սի» քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտն է: Հետազոտությունը Հայաստանում իրականացվել է այս տարվա հոկտեմբերի 15-18-ը դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Հարցերը վերաբերել են Հայաստանի ներքին կյանքին, Հայաստանին առնչություն ունեցող միջազգային կառույցներին, Թուրքիային, Լեռնային Ղարաբաղին եւ այլն: «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության գլխավոր քարտուղար Մայքլ Քամբեքը եզրակացրել է. «Մեզ համար, մասնավորապես, զարմանալի էր տեսնել, թե որքան ցածր է Հայաստանի համար այդքան կարեւոր ԵԱՀԿ Մինսկի խմբի մասին տեղեկացվածության մակարդակը»: ԵԱՀԿ Մինսկի խմբի հանդեպ Հայաստանի բնակիչների վերաբերմունքը դժվար թե ավելի անբարենպաստ լիներ: Հարցման մասնակիցների միայն 5 տոկոսն է ասել, որ անբողջովին հրազեկ է Մինսկի խմբի գործողություններին, եւ միայն 1/4 մասն է կարծում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն աջակցում է Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, իսկ խմբին վստահում է մեկ հինգերորդից էլ պակաս մասը:

*Տես էջ 2*

# Հայ-սլովակյան եւ հայ-հունգարական ռազմական համագործակցությունա

Նոյեմբերի 22-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը Սլովակիայի Հանրապետության պաշտպանության նախարար Լյուբոմիր Գալկոյի հրավերով պաշտոնական այցով գտնվում էր Սլովակիայում:

Պաշտոնական այցի ընթացքում երկու երկրների պաշտպանության նախարարները քննարկել են երկկողմ համագործակցության հարցեր: Սեյրան Օհանյանը եւ Լյուբոմիր Գալկոն ստորագրել են Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սլովակիայի Հանրապետության կառավարության միջեւ ռազմական ոլորտում համագործակցության համաձայնագիրը, որով նախատեսվում է համագործակցություն հետեւյալ հիմնական ոլորտներում՝ ռազմական կրթություն եւ զինվորական անձնակազմի մասնագիտացված ուսուցում, ռազմական բժշկություն, խաղաղապահություն, պաշտպանության ռազմավարական վերանայման բնագավառում փորձի փոխանակում եւ այլն:

Սեյրան Օհանյանը այցելել եւ ծաղկեպսակ է դրել Բրատիսլավայի կենտրոնում Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակը խորհրդանշող հուշարձանին:

ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդմամբ՝ երեկ ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունը Սլովակիայից մեկնեց Հունգարիա, որտեղ նույնպես նախատեսված են քննարկումներ երկկողմ ռազմական համագործակցությանն առնչվող հարցերով: Հ. Ա.

# Հայկական սննդարդյունաբերության հերթական ցուցահանդեսը

«Արմպրոդէքսպո» ամենամյա 10-րդ միջազգային պարենային ցուցահանդեսը երեկ բացվեց Երեւանում: Ցուցահանդեսի բացմանը մասնակցեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նա շրջեց տաղավարներով, ծանոթացավ ներկայացրած ապրանքատեսակներին, զրուցեց գործարարների հետ:

«Արմպրոդէքսպո»-ի կազմակերպիչ Ագրոբիզնեսի զարգացման կենտրոնի տնօրեն Արմեն Դավթյանը, կարեւորելով միջոցառման նշանակությունը, ասաց, որ այստեղ ներկայացվում են մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած զարգացումները, տեղի են ունենում գործարար հանդիպումներ արտադրողների եւ իրացնող կազմակերպությունների ներկայացուցիչների միջեւ:

Տեղեկացնենք, որ այս ցուցահանդեսի մասնակիցների թիվը գերազանցում էր 6 տասնյակը, որոնց թվում էին Հայաստանի սննդարդյունաբերության ինչպես հանրահայտ, այնպես էլ նորաստեղծ ընկերությունները: Մասնակիցների թվում էին նաեւ գերմանական, ավստրիական, բելառուսական ընկերություններ: Ցուցահանդեսը բացվել է կառավարության շենքում եւ կգործի մինչեւ նոյեմբերի 26-ը: Ա. Մ.

# Սեւանի թունելի նորոգման աշխատանքներն ավարտվել են

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, ավարտվել են Երեւան-Սեւան-Իջեւան միջպետական ավտոճանապարհի վրա գտնվող Սեւանի թունելի երթեւեկության անվտանգությունը բարելավելու նպատակով նոյեմբերի 18-22-ը իրականացվող շինարարական աշխատանքները: Մասնավորապես, երթեւեկության բաժանման գոտում տեղադրվել են լուսանդրադարձիչներ, անվտանգության ապահովման նպատակով թունելն ամբողջությամբ տեսանելի եւ վերահսկելի դարձնելու համար տեղադրվել են 14 տեսախցիկներ: Ա. Մ.

ՀԻՇԵՑՈՒՄ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 37 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

✔ ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
✔ ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
✔ ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
▼ www. ingoarmenia.am կայքում
▼ 010-54-74-05 թեժ գծով:

Ինչպես նաեւ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
Մենք վճարում ենք: Մի՛շտ*

* համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:

# Եթե ուրանի շահագործման որոշումը չեղյալ չհամարվի, սյունեցիները կառավարությանը դատի կտան

Ուրանի ուրվականի դեմ հասարակական կազմակերպությունների եւ սյունեցիների պայքարը մեկ տարվա պատմություն ունի: Կառավարության 228 որոշման եւ Լեռնաձոր համայնքում ուրանի հանքերի շահագործման վերաբերյալ պատահական են իմացել ու սկսել քայլեր ձեռնարկել ծրագրի դեմ. վերջինը Կապանի հրապարակում մեծ հանրահավաքն էր: Սակայն դա էլ արդյունք չտվեց.

Այս տարին Լեռնաձորում հորատման երկրորդ մեքենան է աշխատում:

2009 թ. օգոստոսի 4-ին հասարակությանը ներկայացվեց հետախուզական աշխատանքների վերաբերյալ կառավարության որոշումը: Այդ օրը Կապանի «Օրհուս» կենտրոնում հասարակական լսումներ են անցկացվել, բայց Կապանի «Էկոլոգիական անվտանգության պաշտպանության եւ ժողովրդավարության զարգացման» ՀԿ ներկայացուցիչ **Արթուր Ղազարյանի** ներկայացմամբ՝ հասարակությանը պատշաճ կերպով չէին տեղեկացրել լսումների մասին, մասնակիցների 70 տոկոսը բնապահպանության, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունների ներկայացուցիչներն էին:

Կեղծվել է նաեւ լսումների արդյունքը: Կազմակերպիչները հայտարարել են, որ ծրագրի իրականացմանը մասնակիցները կողմ էին, մինչդեռ լսումների արձանագրությունները ապացուցում են, որ գոհ էին միայն երկու նախարարությունների ներկայացուցիչները:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ **Ինգա Զառաֆյանը** «Արմասում» նշում էր, որ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի եւ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի հայտարարությունները, թե ուրանի շահագործման ծրագիրը ռիսկեր չի պարունակում, անհիմն են:

«Ոչ մի փորձաքննություն, ոչ մի հիմնարկ, կազմակերպություն չի ընդգրկվել ռիսկի գնահատման գործընթացին: Չունենք կազմակերպություն, որը կգնահատի առողջական ռիսկերը, երբ դա իրականացվում է ուրանային ծրագիր»:

Մի քանի օր առաջ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ **Աշոտ Մարտիրոսյանը** հայտարարել էր, որ մասնագետները հետազոտություններ են կատարել, որ ծրագիրը ռիսկեր չի պարունակում: «Ինչպե՞ս կարող եք խոսել անվտանգության մասին, երբ այնտեղ ռիսկը գնում է գրունտային եւ ստորերկրյա ջրերի մակարդակով: Ուրանը շատ ագրեսիվ տարր է, եթե հանքում որեւէ գործունեություն ծավալենք, այնտեղ կարող են վտանգավոր պրոցեսներ սկսվել»: Զառաֆյանը նշում է, որ պայմանները բացակայում են անկախ փորձագիտություն իրականացնելու համար: Էներգետիկայի նախարարությունը որպես փորձագիտության արդյունք ներկայացնում է ատոմակայանի տեսակետը, մինչդեռ ատոմակայանն էլ շահագրգիռ կողմերից մեկն է:

Բնապահպանը ներկայացնում է Ռուսաստանի օրինակը՝ հավելելով, որ այնտեղ տարիներ շարունակ շահագործվում են ուրանի հանքերը բաց եւ փակ եղանակով: Պաշտոնական տվյալներով այն քաղաքներում որտեղ շահագործվում են ուրանի հանքերը, արտասովոր երեխաների հիվանդության ցուցանիշը երկու անգամ բարձր է, քան ամբողջ Ռուսաստանում:

Երբ **Արմեն Մովսիսյանը** հայտարարում է, որ այս տարին խոսքը ուրանի հանքերի հետախուզական աշխատանքների մասին է, չի նշում, որ կառավարության որոշումով կա ուրանային ծրագրի ամբողջական փաթեթ, որտեղ խոսվում է ոչ միայն հետախուզման, այլեւ շահագործման եւ վերամշակման, ռադիոակտիվ տարրերի համար գերեզմանոց կառուցելու մասին:

«Եթե Սյունիքի մարզում գործում են 3 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ եւ իրենց աշխատանքով վնաս են հասցնում տարածաշրջանին, կառավարությունը չի կարողանում աշխատանքներ տանել այդ պրոցեսները նորմալ հունի մեջ դնելու համար, ի՞նչ ուրանի ծրագրի մասին է խոսքը: Ուրանը պղինձ չէ, մոլիբդեն չէ», ասաց Արթուր Ղազարյանը:

Կապանի, Լեռնաձորի եւ Քաջարանի ավագանիները արդեն դիմել են կառավարությանը՝ պահանջելով հետ կանչել ուրանի ծրագրի վերաբերյալ որոշումները: Սյունիքի մարզում ուրանի ծրագրի դեմ հավաքվել է 11 հազար ստորագրություն, ծրագրին դեմ է նաեւ Սյունիքի մարզպետը, ում ներկայացուցիչը Կապանում կայացած հանրահավաքի ժամանակ հայտարարել է, որ դեմ է ծրագրին ու կանգնած է հասարակության կողքին:

Սյունեցիների նամակներ են ուղարկել վերոնշյալ երկու նախարարներին, սակայն նամակները մնացել են անպատասխան: Խնդրին չեն արձագանքել նաեւ Սյունիքից ընտրված պատգամավորները: Սյունեցիները եւ մի խումբ ՀԿ-ներ պատրաստվում են կոլեկտիվ հայցով դիմել դատարան եւ չեղյալ համարել կառավարության որոշումը: Նրանց հիմնական պահանջը հասարակության անվտանգության պահպանումն է: «Եթե կառավարությունը մեզ տրամադրի փաստաթղթեր, եթե անկախ փորձագետները փաստեն, որ հանքի շահագործումը վտանգ չի պարունակում, մենք դեմ չենք լինի: Բայց այդպիսի փաստաթղթեր նրանք չեն կարող ներկայացնել», ասաց Արթուր Ղազարյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

# Նախագահ Սարգսյանը՝ Վիլսոնի իրավարար վճռի մասին

**Երեկ նախագահ Սարգսյանը այցելել եւ մասնակցել է ԵՊՀ-ում ընթացող Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի 90-ամյակին նվիրված գիտաժողովին: Նախագահը վճիռը որակել է 20-րդ դարի պատմության մեջ հայերի համար ամենակարեւոր իրադարձություններից մեկը, որով պետք է վերականգնվեր պատմական արդարությունը, վերացվեին Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված ցեղասպանության հետեւանքները. «Այդ վճռով միջազգայնորեն ճանաչվում եւ ամրագրվում էին Հայաստանի սահմանները, որոնց շրջանակներում Մեծ եղեռնի դժոխային փորձությունն անցած հայ ժողովուրդը պետք է կերտեր իր պետականությունը:**

**Օրինադրվությունը եւ բիրտ ուժը խոչընդոտեցին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրավարար վճիռը կյանքի կոչելուն: Այդուհանդերձ, դրա նշանակությունը չի կարելի թերագնահատել. այդ որոշմամբ հայ ժողովրդի կորուսյալ հայրենիքի իրձը ստացավ կենարար եւ իրավական ուժ:**

**Առաջին աշխարհամարտի ավարտին փլուզվեցին կայսրություններ, եւ Եվրոպայի մի շարք ժողովուրդներ ստացան իրենց ազգային պետությունները ստեղծելու ճանապարհով ինքնորոշվելու հնարավորություն: Նախագահ Վիլսոնը ցանկանում էր, որ Հայաստանը լինի նրանցից մեկը եւ օգտվի եվրոպական քաղաքակրթության ընձեռած բոլոր հնարավորություններից: Նա գիտեր, թե ինչ է նշանակում մեծ երկրի պատասխանատվությունը, նա չէր անտեսում փոքրաթիվ ժողովուրդների տառապանքները:**

**Անգամ այսօր, իր պատմական ավանդի ուժով, Վուդրո Վիլսոնը հորդորում է ամրապնդել միջազգային օրինականությունը, կանխել ցեղասպանությունները եւ միջոցներ ձեռնարկել բիրտ ուժի ամենաթողությունը խափանելու ուղղությամբ: Նա այն մարդն է, ում երախտապարտ հայ ժողովուրդը հիշում է ու միշտ կհիշի որպես արդարության ջատագովի եւ իսկական բարեկամի», ասել է նախագահ Սերժ Սարգսյանը՝ ելույթ ունենալով գիտաժողովում:**

Մ. Խ.

# Կոմանդոս. «Ողբերգությունը վաղուց էր հասունանում»

*1-ին էջից*

Վերջերս դիրքերում տեղի ունեցած միջադեպը, երբ 4 զինվոր սպանվեց, Կոմանդոսն անվանում է խմբակային «ռազբորկա»: Պատճառներից են նաեւ հեռուստատեսությունն ու կիսաբանդիտական բովանդակությամբ սերիալները, որոնց հերոսներին զինվորները փորձում են կրկնօրինակել բանակում:

«Ազգի» խնդրանքով անդրադառնալով բանակի խնդիրներին՝ Կոմանդոսն առանձնացրեց նորակոչիկների հոգեբանական ադապտացիան: «Մինչ բանակում ծառայելը պետք է տղաներին հոգեբանորեն պատրաստել»:

Նրա մեկնաբանությամբ, զինվորները պետք է կարողանան ազատ շփվել ծնողների հետ, այս առումով վերջերս նախարարի հրամանը՝ կապված հեռախոսազանգերի հետ, կարեւոր ու տեղին է: «Կարեւոր հարց է նաեւ, թե ինչպես պետք է զինվորները տնօրինեն իրենց ազատ ժամանակը: Պետք է մշակութային միջոցառումներ անցկացվեն, միայն «Հայ զինվոր» թերթը բավարար չէ, անհրաժեշտ են կինոթատրոններ, մարզադահլիճ, երբեմն անհրաժեշտ է թատերական ներկայացումներ կազմակերպել: Բանակից պետք է պատանին վերադառնա որպես ուժեղ տղամարդ»:

Նրա մեկնաբանությամբ՝ պատերազմի վերսկսման հավանականությունը երբեք չպետք է անտեսել, սակայն այս տարին Ադրբեջանն ընդամենը բլեֆ է անում, կրտսեր Ալիեւն էլ հիասթափված ժողովրդին փորձում է ռազմատենչ ելույթներով հանգստացնել: Նա հավելում է, որ հաճախ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն իրենց ելույթներով եւ գործունեությամբ տրամադրում են, որ Ալիեւը ռազմատենչ հայտարարություններ անի, բայց պատերազմը չի սկսվի, որովհետեւ այս տարին Ալիեւի համար շատ ավելի կարեւոր է իր հարստության պահպանումը, իսկ հարստության հիմքը նավթահորերն են:

Հ. Հ.

# Եվրոպացի բարեկամները հարցումներ են կատարել Հայաստանում

*1-ին էջից*

**Հատկապես հետաքրքրական է հետազոտության այն հատվածը, որը կապված է երկրի ներքին կյանքին: Ըստ հետազոտության արդյունքների՝ հայաստանցիների ուղիղ կեսը կարծում է, որ երկրի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ, եւ միայն 1/3-ն է կարծում, որ ընթանում է սխալ ուղղությամբ: Ըստ Էնդրյու Կուպերի՝ սա դիտվում է որպես բավարարվածության մակարդակ: Հետազոտության արդյունքների մեջ անցկացվում է հետեւյալ զուգահեռը. Միացյալ Նահանգներում հարցվողների 1/3-ից էլ քիչ մասն է կարծում, որ երկրի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 40 տոկոսից քիչ մասը: Հարցվողների կարծիքով՝ Հայաստանում զարգացել են ենթակառուցվածքները, անվտանգությունն ու կրթությունը, եւ վերջին 5 տարիների ընթացքում կյանքի որակը համեստորեն բարելավվել է: Էնդրյու Կուպերը, սակայն, չկարողացավ փոխանցել նույն դրական կարծիքները կոռուպցիայի ու ժողովրդավարության վերաբերյալ: Ըստ հարցման արդյունքների՝ սահմանափակ առաջընթաց է եղել ժողովրդավարության կայացման գործում, ու գրեթե ոչ մի առաջընթաց՝ կոռուպցիայի դեմ պայքարի հարցում: Հարցվողների կարծիքով՝ տնտեսության մեջ նույնպես քիչ առաջընթաց է արձանագրվել: Գործազրկությունը շարունակում է մնալ բնակչությանն ամենաշատ հուզող խնդիրը: Համոզմունքը, որ երկրի տնտեսությունը վերջին 10 տարիների ընթացքում այնքան էլ չի զարգացել, հիմնված է հետեւյալ տվյալների վրա՝ հայաստանցիների 1/4-ը կարծում է, որ երկրի իշխանությունն ընդհանրապես չի ներկայացնում իրենց շահերը, իսկ 59 տոկոսի կարծիքով՝ իշխանությունը միայն որոշ չափով է ներկայացնում իրենց շահերը:**

**Հարցին, թե ո՞ր թեկնածուի օգտին կքվեարկեն, եթե հաջորդ կիրակի նախագահական ընտրություններ լինեն, հարցվողներն ավելի շատ պատասխանել են, որ կքվեարկեն գործող նախագահ Սերժ Սարգսյանի օգտին: Հարցվածների 28 տոկոսն ասել է, որ կքվեարկի Սերժ Սարգսյանի օգտին, 10 տոկոսը պատասխանել է՝ Գագիկ Ծառուկյանի օգտին, եւ միայն 4 տոկոսն է ասել, որ կքվեարկի Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին: Տարիքային բոլոր խմբերին պատկանող հարցվողների մեծամասնությունն ասել է, որ իր ձայնը կտա Սերժ Սարգսյանին, թեեւ գործող նախագահն ավելի շատ կողմնակիցներ ունի մեծահասակների, քան երիտասարդների մեջ: Հետազոտության արդյունքներով՝ Սերժ Սարգսյանն ավելի շատ կողմնակիցներ ունի, քան իր կուսակցությունը, ինչը բնորոշ է տարբեր երկրների շատ ղեկավարների: Բնակչության ավելի մեծ մասն ասում է, որ խորհրդարանական ընտրություններում իր առաջին ընտրությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն է (26 տոկոս), հետո նոր Հանրապետական կուսակցությունը (21 տոկոս): Հայաստանցիների 7 տոկոսն իր ձայնը կտա Հայ հեղափոխական դաշնակցությանը, 4 տոկոսը՝ «Օրինաց երկիր» կուսակցությանը եւ 3 տոկոսը՝ Հայ ազգային կոնգրեսին:**

**Ներկաներից մեկի դիտարկմանը, թե անցյալ տարի տեղի ունեցած ընտրությունների ժամանակ ՀԱԿ-ը ստացել է մի քանի անգամ ավելի ընտրաձայն, քան ցույց են տալիս հետազոտության արդյունքները, Մայքլ Քամբեքը պատասխանեց. «Նախ եւ առաջ մենք շահագրգիռ կողմ չենք, մենք հասարակական կազմակերպություն ենք, որը գործում է Բրյուսելում: Այս հետազոտությունն ու արդյունքները չունեն քաղաքական շարժառիթ:**

**Ինչ վերաբերում է հետազոտության արժանահավատությանը, նշեմ, որ ես ու Էնդրյուն անձամբ ենք ծանոթացել բոլոր փաստաթղթերին: Մենք միջազգային կազմակերպություն ենք եւ որեւէ կուսակցության անդամ չենք, իսկ եթե Ձեզ դուր է գալիս Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինձ դուր է գալիս Եվրոմիությունը»: «Այ Փի Էս Սի» քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի տնօրեն Հովհաննես Գրիգորյանն էլ հավելեց, որ ոչ ընտրական ժամանակներում կուսակցությունների ու թեկնածուների վարկանիշներն անկում են ունենում. «Եվ այս հարցումը քաղաքական ընտրություններին նախորդող հարցում չէր»:**

**Մայքլ Քամբեքն էլ իր հերթին ավելացրեց. «Եթե հնարավորություն ընձեռվեր, կուզենայի հետազոտությունը կրկնել նաեւ ընտրություններին մոտ ժամանակահատվածում»:**

**Հետազոտության մեջ նաեւ նշվում է, որ Հայաստանի բնակիչները քիչ վստահություն ունեն Թուրքիայի ու թուրքերի նկատմամբ: 75 տոկոսը հավանություն է տալիս հայ-թուրքական հարաբերությունները սառեցնելուն այն բանից հետո, երբ Թուրքիան չվավերացրեց արձանագրությունները: Շատերը համաձայն են նախագահի այս որոշմանը եւ կարծում են՝ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը գրեթե անհնարին է: Թեեւ հայաստանցիները կասկածանքով են վերաբերվում Թուրքիային, բայց միաժամանակ կարծում են, որ հարաբերությունների հաջող կարգավորումը շահավետ կլինի:**

**Հետազոտությունը պարզել է, որ Հայաստանի բնակիչները Ռուսաստանը դիտարկում են որպես շատ կարեւոր ու արժեքավոր երկիր, եւ մեր երկրում Ռուսաստանն ամենավստահելի արտաքին ուժն է: Հարցվողների 80 տոկոսը վստահում է Ռուսաստանին, իսկ 85 տոկոսը Ռուսաստանը դիտարկում է որպես կարեւոր դեր ունեցող միջնորդ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում:**

**Հովհաննես Գրիգորյանը տեղեկացրեց, որ հարցվողներն ընտրվել են ըստ իրենց ծննդյան ամսաթվերի մոտիկության՝ բացառիկ պատահականությունն ապահովելու նպատակով: Այսինքն՝ հարցվողները պատահական մարդիկ են, եւ չեն ընտրվել քաղաքական կամ այլ դիտավորություններով: Հարցաթերթիկը ներառել է 33 հարց:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանում ընտրությունները Քրիստոսի երկրորդ գալստյանն են նմանվում

Կարծում էինք, թե միջազգային կառույցների կողմից Երեւանում կազմակերպված ընտրական օրենսդրության համաժողովը երկրորդ օրն արդեն ձանձրալի կլինի, քանի որ առաջին օրը քննարկումների ուղղվածությունն էր դրա համար հիմք տվել, սակայն սխալվեցինք: Ձանձրանալու առիթ չկար, իսկ որոշ պահերի էլ լիաթոք ծիծաղելու առիթներ ստացանք: Օրինակ, «Ժառանգությունից» **Արմեն Մարտիրոսյանը** Վենետիկի հանձնաժողովի փորձագետներին իր տեսակետները ընտրացուցակներում հայտնված բացակա կամ մահացած մարդկանց ազգանունների առիթով ներկայացնելիս մոտավորապես այս կարգի միտք հայտնեց, թե հավատում է Քրիստոսի երկրորդ գալստյանը, որի ժամանակ հանգուցյալները կենդանանալու են, սակայն Հայաստանում ամեն անգամ ընտրությունները Քրիստոսի երկրորդ գալստյանն են նմանվում, քանի որ հազարավոր ընտրողներ կենդանանում եւ քվեարկում են: Կամ ՀՅԴ-ից ԿԸՀ-ի անդամ Համլետ Աբրահամյանը, երբ մի քանի անգամ քվեարկած մարդկանց ցուցակները հրապարակելու մասին ՀՅԴ առաջարկը ներկայացնելուց հետո նույն պատասխանն էր ստանում, թե անձի մասնավոր կյանքի իրավունքի խախտման դաշտում է այդ առաջարկը, մի պահ բարկացավ ու հարցրեց փորձագետներին. «Հիմա դուք ո՞ւմ իրավունքներն եք պաշտպանում, հանգուցյալների՞»: Ընդհանրապես` խորհրդարանական եւ մասամբ` արտախորհրդարանական կուսակցությունների` ընտրակեղծիքների դեմն առնելու առաջարկների եւ Վենետիկի հանձնաժողովի փորձագետների տեսակետների բարձրաձայնումը մի պահ վերածվեց փոխհամոզման մրցության: Այն աստիճան, որ իրավագետ **Հրայր Թովմասյանը «Ազգին»** ընդմիջմանը հայտնած տեսակետը բարձրաձայնեց, թե` մի՛ համոզեք փորձագետներին, նրանք իրենց տեսակետն են հայտնում, բայց որոշում կայացնողը մենք ենք, բացի այդ` երկրի բոլոր պրոբլեմները մի ընտրական օրենսգրքով ինչո՞ւ պայմանավորել, մյուս ոլորտներում հարցերը չլուծած` «մի փորձեք մի ոլորտում հարց լուծել»: Բայց դրան համաձայն չէին ոչ ՀՅԴ-ից Արմեն Ռուստամյանը, որ ասում էր, թե վաղը Դաշնակցության այլընտրանքային նախագիծը մերժելիս, ախր, համաժողովում հնչած կարծիքներն են մատնացույց անելու: Համաձայն չէր նաեւ «Ժառանգության» Ստյոպա Սաֆարյանը, որն «**Ազգի**» դիտարկմանը, թե եթե նրանք (Վենետիկի հանձնաժողովի փորձագետները) հարց լուծող չեն, ինչո՞ւ եք նրանց ուզում ձեր տեսակետների մեջ ազդեցիկ համոզել, նկատեց. «Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունները միշտ մանիպուլյացիաների առարկա են դառնում, իշխանություններն իրենց ցանկությունները հիմնավորում են մի փորձագետի մասնավոր մեկնաբանությամբ»: Նրա կուսակից Ռուբեն Հակոբյանը եւս կարծում է, որ վտանգավոր է, երբ իշխանությունը օգտագործում է Վենետիկի հանձնաժողովի տեսակետներն ընդդիմության առաջարկներ մերժելիս: Արտյուշա Շահբազյանն ակնկալում էր, որ քննարկումները (ոչ միայն համաժողովում, այլեւ հետագա, այդ թվում` խորհրդարանական քննարկումները) ինչ-որ բանի կհասցնեն` եթե ոչ ողջ փաթեթը, այնուամենայնիվ, հիմնական հարցերը կարտացոլվեն ԸՕ-ի վերջնական տարբերակում: Բայց երբ հարցրինք, թե արդյո՞ք նորմալ, տանելի ընտրական օրենսգրքի հույս ունի. «Չէ, հո այդքան երազկոտ չե՞մ», ասաց:



Իսկ հիմնական առաջարկները, որ ներկայացնում էր խորհրդարանական ընդդիմությունը, վերաբերում էին քվեարկած մարդկանց ցուցակների հրապարակմանը ընտրություններին հաջորդող ժամերին, ընտրությունների ընթացքը տեսանկարահանելու հնարավորությանը (սա հենց հայկական ՀԿ-ների մեկի ներկայացուցիչ է. Հակոբյանի կարծիքով մեր գյուղերում վենդետայի հիմք կարող է դառնալ), բողոքարկման մեխանիզմի արդյունավետ դարձնելուն, ընտրական հանձնաժողովների հավասարակշռված ձեւավորմանը եւ այլն: Անգամ մի փոքր ծայրահեղ ու նաեւ ժամանակից առաջ ընկած առաջարկներ հնչեցին. օրինակ` ոչ կառավարական կազմակերպություններից մեկի ներկայացուցիչը համոզված էր, որ ընտրության չգնալու համար անձը պետք է պատասխանատվության ենթարկվի, իսկ ՀՅԴ-ական Արսեն Համբարձումյանն առաջարկում էր ընտրակեղծիքների դեմն առնելու համար էլեկտրոնային քվեարկության համակարգ, բայց դա քանի որ հայաստանյան իրականությանը դեռ հասու չէ, միջանկյալ տարբերակով էր բավարարվում` առաջարկելով քվեարկության պահը ֆիքսել միայն էլեկտրոնային համակարգով, իսկ Լյուդվիգ Խաչատրյանը (ՀԿ սեկտոր) ընտրակեղծիքները կանխելու լավագույն ճանապարհ էր համարում ժամը մեկ եւ օրվա վերջում էլ անմիջապես քվեարկությունից հետո ինտերնետով քվեարկության մասնակիցների թվի հրապարակումը:

Ամեն դեպքում համաժողովին մասնակցող միջազգային փորձագետները Ջեք Յանգը, Մարիանա Սկոդան, Վադիմ Ժդանովիչը, Կամերոն Քուինը ու մյուսները, հղում անելով, թե լուծում տվողն ու որոշում կայացնողն իրենք չեն, այլ Հայաստանի քաղաքական էլիտան, այնուամենայնիվ, տեսակետ էին հայտնում, թե քվեարկողների ցուցակների հրապարակումը, կամ տեսաձայնագրումը անձի մասնավոր կյանքի իրավունքի խախտում է ու չի համապատասխանում միջազգային չափանիշներին, իսկ հավասարակշռված ընտրական հանձնաժողովներին եւ որոշ այլ առաջարկների կողմնակից էին: Վենետիկի հանձնաժողովի փորձագետ Մայքլ Գետոն ամփոփեց. «2 լավ օր անցկացրինք», միջազգային փորձագետ Նիկոլա Շմիդթը ձեւակերպեց. «Բոլորի համար ընդունելի լուծումները զիջումներով են լինում»:

ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանն էլ, եզրափակելով համաժողովը, տեղեկացրեց, թե խորհրդարանում աշխատանքային խումբ կձեւավորվի բոլոր խմբակցություններից, որն անդրադարձ կանի ընտրական օրենսգրքի բարեփոխմանն ուղղված առաջարկներին, այդ թվում` միջազգային համաժողովում հնչած:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Ամերիկյան Մոնթեբելոն եւ հայկական Ստեփանակերտը քույր քաղաքներ են

Շարունակվում է ԼՂՀ նախագահի Բակո Սահակյանի այցը ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգ: Նոյեմբերի 22-ին Սահակյանը այցելել է Մոնթեբելո քաղաք եւ հանդիպում ունեցել քաղաքային խորհրդի անդամների հետ` քաղաքապետ Ուիլյամ Մալինարիի գլխավորությամբ: Իր խոսքում ԼՂՀ նախագահը կարեւորել է Մոնթեբելոյի իշխանությունների հաստատակամությունը Արցախի հետ հարաբերությունների զարգացման գործում, որի լավագույն դրսեւորումներից է մայրաքաղաք Ստեփանակերտի հետ քույր քաղաքների պայմանագրի ստորագրումը:

Բակո Սահակյանը քաղաքային իշխանություններին շնորհակալություն է հայտնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին սատարելու սկզբունքային դիրքորոշման համար: Քաղաքապետ Մալինարին իր հերթին հրապարակել է քաղաքային խորհրդի հռչակագիրը, որտեղ տեղական իշխանությունները ողջունել են Արցախի Հանրապետության նախագահին ու նրա գլխավորած պատվիրակության այցը եւ պատրաստակամություն հայտնել ըստ ամենայնի խորացնել եւ ընդլայնել հարաբերությունները հայկական երկրորդ հանրապետության հետ:

Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության հաղորդմամբ, այնուհետեւ նախագահ Սահակյանն այցելել է Մոնթեբելոյի Հայկական կենտրոն, հանդիպել տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումներին մասնակցում էին Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը, ԱՄՆ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, Արցախի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանը, պաշտոնատար այլ անձինք: Բակո Սահակյանն իր այցի շրջանակներում հանդիպումներ է ունեցել նաեւ ամերիկահայ բարերարների հետ:

Հ. Ա.

«ԷԼԲԱՏ» ԳՈՐԾԱՐԱՆ

# Հայաստանում տարեկան կարտադրվեն 300 հազար մարտկոցներ

## *170 աշխատատեղ` 206 հազար միջին աշխատավարձով*

**Երեկ Երեւանում պաշտոնապես բացվեց տարածաշրջանում միակ եվրոպական չափանիշներին համապատասխանող մեկնարկային մարտկոցների արտադրման «Էլբատ» գործարանը: Նախատեսված է, որ այն տարեկան կարտադրի 300 հազար մարտկոց տարբեր տեսակի մարդատար ու բեռնատար մեքենաների համար: Ըստ հաշվարկների, միայն 170 հազարը կարելի է սպառել հայաստանյան շուկայում, մյուս մասի արտահանման համար այժմ բանակցություններ են ընթանում: Արդեն հետաքրքրություն են ցուցաբերել վրացի գործարարները: Գործարանի բացման արարողությանը ներկա էր հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Միջոցառմանը ներկա էին նաեւ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը եւ պաշտոնատար այլ անձինք: Նրանք գործարանի ղեկավարության հետ շրջեցին գործարանում, ծանոթացան աշխատանքային պայմաններին ու գործարանի հնարավորություններին:**

**«Էլբատ» ընկերության խորհրդի նախագահ Սամվել Աբրահամյանը լրագրողներին տեղեկացրեց, որ 2007-ին ստեղծված գործարանի բաժնետոմսերի 51 տոկոսի սեփականատերը գերմանական «Քրոնմիթ Մայնինգ» գերմանական ընկերությունն է, մյուս 49 տոկոսը հայկական կողմի ձեռքում է: Ընկերության ղեկավարը վստահեցրեց, որ մարտկոցները կլինեն բարձրորակ, 45-210 ամպերաժով, եվրոպական երկրներից ներկրված մարտկոցների գնի համեմատ մատչելի կլինի, իսկ մյուս երկրներից ներկրվածների համեմատ միգուցե բարձր կլինեն: Գործարանի ստեղծման համար 2008-2010 թվականների ընթացքում կատարվել է 175 մլն եվրոյի ներդրում: Գործարանում այս պահին աշխատում է 145 մարդ: Նախատեսվում է այդ թիվը հասցնել 170-ի, միջին աշխատավարձը 206 հազար դրամ է: Ս. Աբրահամյանն ասաց, որ աշխատողները վերապատրաստում են անցել ու շարունակում են վերապատրաստվել եվրոպացի բարձրակարգ մասնագետների մոտ: Վերջիններս դեռ մի քանի ամիս կօգնեն հայաստանցի սկսնակ գործընկերներին:**

**Հայաստանում Գերմանիայի դեսպան Հանս-Յոխեն Շմիդթը` ողջունելով ներկաներին, նշեց, որ դեսպանատունն իր առջեւ խնդիր է դրել հնարավորինս մեծ թվով գերմանացի ներդրողներ բերել Հայաստան: Դեսպանի խոսքով, Հայաստանում ներդրումներ կատարելու միջավայրը լավ է, սակայն բարելավման կարիք ունի, պետք է հարկային բարեփոխումներն առավել ինտենսիվ իրականացվեն:**

Հ. Ա.




# «ՎՏԲ-Հայաստանը» շարունակել է ակտիվ վարկավորումը

**«ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովը երեկ լրագրողներին ներկայացեց բանկի այս տարվա 9 ամիսների գործունեության արդյունքները: Նա մասնավորապես նշեց, որ հիմնական ուշադրությունը կենտրոնացած է եղել վարկավորման վրա` շարունակել են ակտիվորեն ինչպես կորպորատիվ հաճախորդների վարկավորումը, այնպես էլ մանրածախ վարկավորումը` ավտովարկեր, նորոգման վարկեր, հիպոթեկային վարկեր եւ այլն: Բանկի ղեկավարի համոզմամբ, տարին դժվար էր, բայց իրենց ցուցանիշները վատը չեն: Մասնավորապես, զուտ եկամտի առումով «ՎՏԲ-Հայաստանը» առաջինն է Հայաստանի բանկային համակարգում` մոտ 3,2 մլրդ ցուցանիշով: Ավելացել են նաեւ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց մատուցած ծառայությունների ծավալը, թողարկված վճարային քարտերի քանակը եւ այլն:**

**Բանկի ցուցանիշները ներկայացնելուց հետո Վալերի Օվսյաննիկովը պատասխանեց լրագրողների հարցերին: Հայկական դրամի վարքագծի վերաբերյալ տրված հարցին պատասխանելով` «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենը ճիշտ համարեց Կենտրոնական բանկի կողմից հայկական դրամի ամրապնդման քաղաքականությունը, ավելացնելով, որ 2009-ի կտրուկ արժեզրկումից հետո դրամն այժմ գտնվում է իր արժեքին համապատասխան միջակայքում:**

# «Ակբա-կրեդիտ ագրիկոլ» բանկը սկսել է թողարկել American Express Gold քարտը

**«Ակբա-կրեդիտ ագրիկոլ» բանկը Հայաստանում բացառիկ հիմունքներով սկսում է թողարկել American Express Gold քարտը: Այս մասին երեկ լրագրողներին հայտնեց բանկի գլխավոր գործադիր տնօրեն Ստեփան Գիշյանը: Նա մասնավորապես տեղեկացրեց, որ քարտը տրամադրում է նաեւ բազմաթիվ ծառայություններ, մասնավորապես` ճանապարհորդական աննախադեպ փաթեթ, որը ներառում է հատուկ ճանապարհորդական առաջարկներ եւ ապահովագրություն:**

**«Ես հպարտ եմ, որ համաշխարհային մակարդակի այս պրոդուկտը հիմա արդեն թողարկվում է Հայաստանում: Համոզված եմ, որ քարտը կապացուցի իր բացառիկ վճարային գործիք լինելու փաստը Հայաստանի վճարունակ, պահանջկոտ եւ գործունյա հաճախորդների համար», իր հերթին նշեց American Express ընկերության փոխնախագահ Ալեքս Ֆրբերը:**

Ա. Մ.

# Լեւոն Ահարոնյանի գիրքը

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

2009 թ. մարտի 2-ին Թեհրանի «Հայ Ակումբի» դահլիճում «Սալես» հրատարակչության նախաձեռնությամբ տեղի ունեցավ պարսկերեն լեզվով թարգմանված իրանահայ հանրահայտ գործարար, բարերար եւ հասարակական գործիչ, ճրտգ. Լեւոն Ահարոնյանի հուշերի՝ «Փոթորկոտ կյանքիս օրերը» խորագրով, 1535 էջ պարունակող երկհատորանի գրքի շնորհանդեսը: Գիրքը տպագրվել է 2200 օրինակ տպաքանակով, «Սալես» հրատարակչության միջոցով:

Խոսելով գիրքը գրելու իր նպատակների մասին, Ահարոնյանը հուշերի էջ 388-ում հավաստում է. «Այս տողերը գրելով նպատակ չունեմ ներկայացնելու իմ գործունեությունը, այլ ցանկանում եմ բարեխղճորեն ու ճշգրտորեն ներկայացնել այն օրերում հայ համայնքի վիճակը, կենցաղային դրույթը եւ պատմությունը... այն համոզմունքով, որ պատմությունը գրելու համար հարկավոր է լինել անկողմնակալ, հիմնվել ճիշտ եւ հավաստի փաստաթղթերի վրա, որոշեցի ամենայն անկեղծությամբ գրի առնել այն»:

Իրականում այս գիրքը, որպես հուշագրություն, լայն տեղեկություններ է պարունակում հեղինակի անձնական եւ ընտանեկան կյանքի, նրա տնտեսական, հասարակական եւ բարեգործական գործունեության մասին, որոնք սերտորեն շաղկապված են միմյանց եւ կարդացվում են խոր հետաքրքրությամբ, հաճախ նաեւ հումորով ու հիացմունքով, որովհետեւ այդ տողերից վեր է հառնում բազում դժվարությունների միջով անցած եւ հաջողակ հայի կերպարը, որը երբեք չի մոռանում, որ ինքը զավակն է նույնպես բազում փորձություններ հաղթահարած մի ժողովրդի եւ, որ ինքը պարտք ունի կատարելու նրա հանդեպ:

Գիրքը նաեւ չափազանց հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Իրանի եւ մասնավորապես իրանահայ կյանքի վերջին տասնամյակների քաղաքական-հասարակական իրադարձությունների մասին, եւ որպես այդպիսին, այն պետք է համարել բացառիկ եւ աննախընթաց մի գործ, որը ներկայացնում է պատմական արժեք: Ահարոնյանը այս հատորներում բարձրաձայնում է այնպիսի հարցեր ու խնդիրներ, որոնց մասին քչերն են մեզանում համարձակվում կամ ցանկանում շշուկով անգամ անդրադառնալ, եւ հենց այդ պատճառով էլ ենթակա են մոռացության: Ահա թե ինչու հարկ է շնորհավորել հեղինակին իր կատարած ծավալուն աշխատանքի համար: Սակայն պետք է նշել, որ դժբախտաբար միշտ չէ, որ հեղինակին հաջողվում է տալ իրադարձությունների առարկայական եւ անկողմնակալ պատկերը: Նա հաճախ հենվում է իր լսածների եւ ենթադրությունների վրա եւ անում ոչ ճիշտ եզրակացություններ ու մեկնաբանություններ, ինչը հակասում է անաչառ պատմաբանի իր հավակնությանը:

Ստորեւ կանդրադառնանք մեր դիտողությունը հաստատող բազմաթիվ պարագաներից մի քանիսին, որոնց պարզաբանումը, հուսով ենք, կտրուկ փոփոխության կենթարկի հեղինակի եզրահանգումները: Նշենք նաեւ, որ մեր ուշադրության կենտրոնում լինելու են տվյալ ժամանակաշրջանի իրանահայ հասարակական-քաղաքական իրադարձությունները եւ դրանցում այս կամ այն չափով մասնակից ու դերակատար կազմակերպություններին ու անհատներին տված հեղինակի գնահատականները:

## ԻՆՉՊԵՍ ԼԵՎՈՆ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ ԴԱՐՁԱՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Նախ տեսնենք, թե ինչպես Ահարոնյանը ներգրավվեց համայնքային վարչական գործերի մեջ եւ դարձավ թեմական խորհրդի նախագահ:

Դաշնակցությունը, որի ձեռքում էին գտնվում Իրանի հայկական ազգային բոլոր հաստատությունները, 1979-ի հեղափոխությունից հետո, վախենալով անցած վարչակարգին մատուցած իր անվերապահ ծառայությունների հետեւանքներից ու նաեւ այն հանգամանքից, որ չէր մասնակցել Իրանի իշխանափոխության հանրաքվեին, ինչպես նաեւ իրաքյան եւ սիրիական հեղափոխություններին հաջորդած իր դառը փորձից (Իրաքում՝ 1959թ. փակվեց կուսակցության «Գոտեմարտ» պաշտոնաթերթը եւ երկրից արտաքսվեցին կուսակցության պարագլուխներ դոկտ. Բաբկեն Փափազյանը եւ Գրիգոր Ստարջյանը («Ալբիլադ» օրաթերթ, 3 հունվար 1960), Սիրիայում՝ 1962 թ. ապրիլին երկրի զինվորական բարձրագույն դատարանը երեք դաշնակցականների դատապարտեց մահվան՝ լրտեսության եւ այլ մեղադրանքներով («Զարթոնք», 13 հոկ. 1962) պարտավորվեց որդեգրել նոր քաղաքականություն, այն է՝ հրապարակ չգալ կուսակցության անունով եւ ազգային ու հասարակական բեմից հեռու պահել իր անդամներին, նրանց փոխարեն առաջ քաշվեցին ոչ կուսակցական այնպիսի անհատներ, ովքեր անվերապահորեն կկատարեին կուսակցության հրահանգները: Հենց այս նպատակով էլ Նոր Ջուղայում առաջադրվեցին դոկտ. Մեսրոպ Բալայանը, որպես Իրանի Ի. Հանրապետության խորհրդարանի պատգամավորության թեկնածու, գնդապետ Մալուս Պողոսյանը, որը դարձավ Ն. Ջուղայի ներկայացուցչական ժողովի նախագահ, Լեւոն Ահարոնյանը եւ ...:

Ահարոնյանը ակամայից հաստատելով այդ փաստը, գրում է. «Հեղափոխությունից հետո դաշնակցություն կուսակցության պարագլուխների մեծ մասը հեռացան Իրանից, կուսակցությանը թողնելով անորոշ վիճակում» (էջ 492) ...«որոշները Իսլամական հեղափոխությունից տարիներ անց իրենց կյանքը փրկելու համար թաքնվում եւ չէին համարձակվում երեւալ որեւէ տեղ» (էջ 1000)... «Նորընտիր թեմական խորհրդի անդամներից ոչ մեկը անդամակցած չէր նախկին թեմական խորհուրդներում», (էջ 388) «...պատգամավորական ժողովի նախկին ուսյալ եւ տեղյակ պատգամավորներին փոխարինում էին թերուս խանութպանները ու արհեստավորները.. որոնք զուրկ էին երկրի առօրյա քաղաքականության ըմբռնման կարողությունից» (էջ 972):

Ահարոնյանի լուսաբանությունները այս մասին ոչ մի կասկածի տեղ չեն թողնում: Հուշերի 384-րդ էջում կարդում ենք. «Հեղափոխությունից հետո պառակտվեց հայ համայնքը... ձախերը եւ դաշնակցության հակառակորդները ամենուր պայքարում էին կուսակցության, հոգեւորականների ու ազգային մարմինների դեմ... մյուս կողմից թեմական խորհուրդն ու պատգամավորական ժողովը... ի զորու չէին շարունակելու ազգային աշխատանքները... ուստի, ըստ օրվա պահանջի, կայանում է նոր պատգամավորական ժողովի ընտրություն»: Իսկ էջ 384-386-ում նա խոստովանում է, որ հանրահայտ դաշնակցական Վաչիկ Խաչատրյանի հորդորանքով ինքը, դնելով իր թեկնածությունը եւ ձեռք բերելով քվեների բարձր տոկոսը, ընտրվում է պատգամավոր, թեմական խորհրդի անդամ եւ ապա թեմական խորհրդի նախագահ: Նաեւ էջ 495 եւ 496-ում գրում է, որ ըստ կայացած համաձայնության, ինքը պարբերաբար ամիսը մեկ անգամ բոլորից թաքուն հանդիպում է դաշնակցական պարագլուխ Վաչիկ Ղարաբեգյանի եւ երբեմն էլ դոկտ. Սամսոն Ստեփանյանի հետ, որտեղ քննարկվում էին հայ համայնքի խնդիրները: Նրանք առաջադրում էին իրենց պահանջները, եւ Ահարոնյանը դրանք ներկայացնում ու վավերացնում էր թեմական խորհրդի ժողովներում: Եվ էջ 498-ում խոստովանում է, որ հրատապ խնդիրները այնժամ էին վավերացվում, երբ հաստատվում էին ժողովարահին կից սենյակում գտնվող դաշնակցականների միջոցով:

Այլ կերպ ասած՝ Ահարոնյանի անդամակցությամբ կազմվում է կուսակցական բջիջ, եւ նա անվերապահորեն կատարում է այդ բջջի հրահանգները:

Իհարկե, ինքնըստինքյան իշխանավորների հանդիպումն ու խորհրդակցությունը համայնքի անդամների, միությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ գնահատելի ու ցանկալի հատկություն է, բայց երբ այդ տեղի է ունենում շարունակաբար եւ միայն մի հոսանքի պատասխանատուի հետ, արդեն լինում է կասկածելի ու միտումնավոր:

Այսպիսով Ահարոնյանը իր նախագահության շրջանում ազգային եւ համայնքային բոլոր խնդիրները դիտել ու վարել է դաշնակցականի դիտանկյունից: Հուշերում չկա որեւէ պարագա, ուր նա ներկայացրած լինի ուրույն առաջարկություն, աշխատած լինի ինքնուրույն կամ որեւէ հանդիպման մասնակցած լինի առանց դաշնակցականի ընկերակցության, եւ որ ամենակարեւորն է, նա, ինչպես տիպիկ դաշնակցական, Դաշնակցության բոլոր ընդդիմախոսներին պիտակավորել է՝ անվանելով նրանց «ձախեր», «կոմունիստներ», «լրտեսներ», «դավադիրներ», «հակազգայիններ»... այդ շարքում են դասվում. «ակնոցավորները», «Հրազդան», «Էրեբունի», «Աբովյան» միությունները ու «սուրենականները», նա վերջինիս համարում է ամենածայրահեղը (էջ 382):

## «ՍՈՒՐԵՆԱԿԱՆՆԵՐ»

«Սուրենականների» մասին նա իր վկայությունները կատարել է ըստ այնօրյա թեմական խորհրդի անդամ, ճարտ. Վիգեն Գեւորգյանի պատմածների, առանց ստուգելու դրանց ճշտությունը կամ տրամաբանությունը: Խոսքը տանք հեղինակին.

«Սուրենականների կազմակերպիչը (նախկին դաշնակցական) (խոսքը Սուրեն Հոնարչյանի մասին է) Ս. Սարգիս եկեղեցու բակում (առաջնորդարան) ամեն երկուշաբթի եւ չորեքշաբթի օրերը ցույցեր էր կազմակերպում դաշնակցության եւ թեմական խորհրդի դեմ... Թեմական խորհուրդը բազմիցս աշխատել էր բանակցել ցուցարարների հետ, սակայն նրանք արհամարհելով թեմական խորհրդին, խուսափում էին բանակցելուց... Թեմական խորհուրդն էլ որոշել էր այլեւս նրանց հետ չբանակցել...նոյեմբերի (ճիշտը՝ 1979 թ. դեկտեմբերին) վերջին երկուշաբթի օրը, երբ թեմական խորհուրդը գումարել էր իր հերթական նիստը...«սուրենականները», թվով չորս-հինգ հարյուր հոգի ներխուժում են ժողովարահ... եւ, բացի թեմակալ առաջնորդից, մնացածին պահում են որպես պատանդ, թեմակալ առաջնորդը, որին թույլատրել էին հեռանալ ժողովարահից, իրադարձությունների մասին տեղեկացնում է քաղաքի եկեղեցիների խորհուրդներին եւ հրահանգում հնչեցնել եկեղեցիների զանգերը...մեկ ժամ չանցած հազարավոր զայրացած հայեր, զինված սառը զենքերով, գիշերվա ժամը մեկին հասնում են առաջնորդարան, հասնում են նաեւ ոստիկանությունից, որոնց ժողովուրդը միջամտության իրավունք չի տալիս, պատճառաբանելով, որ դա ներքին խնդիր է, եւ իրենք կլուծեն այն...բազմության միջից մի երիտասարդ, ամենայն զգուշությամբ մոտենալով ճարտ. Վիգեն Գեւորգյանին ասում է, որ իրենք «Ալիքից», «Արարատից» եւ «Սիփանից» են եկել պատանդներին օգնելու համար... «սուրենականների» խմբի ղեկավարը, տեսնելով այդ անցանկալի վիճակը, աշխատում է փախչել, սակայն չի հաջողում եւ ենթարկվում է ներկաների ծեծին: Վերջապես սրբազան հոր եւ մի քանի երիտասարդների օգնությամբ սրահի հետեւի դռնից հեռացնում են նրան, եւ այսպիսով ավարտվում է թնջուկը» (էջ 382):

Ընթերցելով վերոհիշյալ տողերը ակամա մտածում ես՝ «սուրենականները» ի՞նչ պիտի անեին «պատանդներին», ի՞նչ նպատակով, ո՞ւր եւ ինչքա՞ն պիտի պահեին նրանց, ո՞րն էր նրանց վերջնագիրը, արդյո՞ք զինված էին, արդյո՞ք հսկում էին երթեւեկությունը առաջնորդարանի շենքում, արդյո՞ք դիմադրություն են ցուցաբերել «օգնություն» հասնողներին, նրանք ինչո՞ւ թույլատրեցին սրբազան հորը հեռանալ սրահից եւ իրենցից թաքուն «օգնություն» կանչել, ինչո՞ւ չխափանեցին հաղորդակցական կապի միջոցները: Ովքե՞ր էին այն երիտասարդները, որոնք եկել էին «պատանդներին օգնելու»: Ովքե՞ր եւ ինչո՞ւ արգելեցին ոստիկանության միջամտությունը, դա ո՞ւմ էր ձեռնտու: Ո՞վ գիտեր, որ տեղի ունեցածը «ներքին խնդիր է», բացի «Ալիքից», «Արարատից» ու «Սիփանից» եկածներից: Ինչո՞ւ առանց դատ ու դատաստանի ազատ արձակեցին «պատանդ վերցնողներին»:

Ցավոք, դեպքերի ընթացքը վկայում է նախօրոք կազմակերպված դավադրության մասին, որի նպատակն էր ձերբազատվել ժողովրդի պարբերական հավաքներից:

«Սուրենականները» իրենց տաքարյունության պատճառով անգիտակցաբար ընկնում են դաշնակցականների լարած թակարդը: Նրանց մարդիկ ուշ երեկոյան հնչեցնում են եկեղեցիների զանգերը եւ բարձրախոսներ տեղադրած մեքենաներով շրջում հայկական թաղամասերը եւ հայտարարում, թե հասեք, գրավել են առաջնորդարանը եւ պատանդ վերցրել թեմակալ առաջնորդին: Եվ անմիջապես «Ալիքում», «Արարատում» ու «Սիփանում» նախապատրաստված նրանց մարդիկ գալիս են «պատանդներին» օգնելու: Արդյունքում՝ «սուրենականներն» են դառնում պատանդ: Նրանց ղեկավարին տեղափոխում են «Սիփան» միություն եւ ...

Հասկանալի է, որ նույն 17 դեկտեմբեր 1979-ին, առնվազն չորս ժամ Թեհրանի եկեղեցիների զանգերը հնչեցնելուց առաջ Նոր Ջուղայում «Դաշնակցության համակիրներ» ստորագրությամբ թռուցիկներ են գրվում, եւ հայտարարվում է վերը նշված «դեպքի» մասին («Փյունիկ» շաբաթաթերթ, թիվ 24): Իսկ թեմակալ առաջնորդն էլ «Փյունիկ» շաբաթաթերթին տված հարցազրույցում հայտարարել է. «Ոչ ոք ինձ գերի չի վերցրել ու չի անարգել» («Փյունիկ» շաբաթաթերթ, թիվ 24):

Սուրեն Հոնարչյանը, խոսելով «Փոթորկոտ կյանքիս օրերը» գրքի մասին իր 14 մայիս 2009 թ. գրությամբ, որը տարածել է տարբեր շրջանակներում, գրում է. «Հեղափոխության հաղթանակից հետո հայ մտավորականները, դեմոկրատ խմբերն ու միությունները, ոչ դեմ էին մեր եկեղեցական կառույցներին, ոչ ցանկանում էին վնասել մեր դպրոցներին, ոչ էլ խաբում էին ժողովրդին, այլ պահանջում էին իրանահայ երեք թեմերի վերամիավորումը Մայր աթոռ Ս. Էջմիածնին: Նրանք առաջարկում էին կրթական ասպարեզում ստեղծված դժվարությունները հաղթահարել ոչ թե ցույցերի ու դասադուլների, այլ բանակցությունների միջոցով: Նրանք համոզված էին, որ համայնքում ստեղծված խնդիրներին ճիշտ լուծումներ տալու համար պետք էր հաշվի նստել նաեւ այլախոհ կազմակերպությունների հետ: Նրանք ազգային մարմիններից պահանջում էին անօրինականությունների վերացում եւ հաշվետվություն ու պատասխանատու կեցվածք ժողովրդի նկատմամբ եւ արդար ընտրությունների իրականացում: Իսկ Ահարոնյանը իր հուշերում, այդ բոլորը համարել է ժողովրդին խաբել: Իսկ նախկին մենատերերը, չհանդուրժելով այդ բոլորը, գործադրելով ազգային մարմինների ունեցած բոլոր հնարավորությունները, զրպարտությունների, ճնշումների, արհամարհանքների, ծեծկռտուքի եւ արհեստականորեն ստեղծած բախումների ու միջադեպերի շնորհիվ, մեկուսացրին ու չեզոքացրին այլախոհ շրջանակներին, ինչը շարունակվում է մինչեւ օրս:»

Իսկ 4 մայիս 2009 թ. գրությամբ, որը լույս է տեսել «Հույս» երկշաբաթաթերթի 50-րդ համարում, Հոնարչյանը գրում է. «Ցաւօք, գրքի հեղինակն էլ, առանց ներկայացնելու այլախոհ շրջանակների տեսակէտներն ու առաջարկները, համարեա բոլոր այն միութիւնների ու շարժումների հասցէին (որոնք ասպարէզ իջան յեղափոխութեան շնորհիւ), նոյն թունաւոր պիտակներն ու զրպարտութիւններն է կրկնել, ինչ երեսուն տարի առաջ կատարեցին համայնքի նեղմիտ ու յետադէմ տարրերը»:

Այստեղ պետք է նշել, որ մենք նպատակ չունենք անվերապահորեն պաշտպանելու «սուրենականների» վարած քաղաքականությունը: Մենք միայն քննարկում ենք այդ դեպքի մասին հեղինակի մեջբերումներն, օգտագործելով արխիվային մեզ հայտնի աղբյուրները: Ինչ խոսք, այս միջադեպը շատ ծանր եւ բացասական ազդեցություն ունեցավ իրանահայ ոչ դաշնակցական կազմակերպությունների հեղինակության վրա: ՀՅԴ-ն լավագույնս օգտագործեց այն, իր լրատվամիջոցների եւ ազգային ու կրոնական իշխանություններում ունեցած իր լծակների միջոցով լայն հակաքարոզչական արշավ ծավալեց ոչ միայն «սուրենականների», այլեւ իրանահայ բոլոր այլախոհ եւ ձախ կազմակերպությունների ու անձերի դեմ:

Ինչպես «սուրենականների» վերաբերյալ վերոհիշյալ մեջբերումները, Ահարոնյանը իր հուշերի մեծ մասն է գրի առել ազդված այլոց քարոզչությունից, օրինակ, նա, խոսելով Հայաստանի իշխանությունների դեմ Դաշնակցության եւ «Ալիք» օրաթերթի տարած ամբաստանությունների մասին, խոստովանում է. «Այս հորինված ստերը կարճ ժամանակ ազդեցին նաեւ ինձ վրա» (էջ 1200): Սակայն նա շատ ուշ է գլխի ընկնում, որ ազդվել է այդ քարոզչությունից, այդ ազդեցության ժամանակահատվածը կարճ չի եղել, նա իր հուշերի մեծ մասն է գրի առել այդ ազդեցության ներքո:

## ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ

Ահարոնյանը հուշերի էջ 384-ում գրում է, որ բողոքողները «...դաշնակցություն կուսակցությանը դատապարտում էին իրանահայ թեմերը Ս. Էջմիածնից անօրինաբար անջատելու եւ Անթիլիասին միացնելու գործում...»:

Ինչպես գրքում, այնպես էլ Ահարոնյանի գործունեությունից պարզ է, որ նա ինքն էլ, ինչպես իրանահայության ճնշող մեծամասնությունը, չի հաշտվել այս աղետաբեր իրողության հետ, բայց պարզ չէ՝ նա պաշտպանո՞ւմ, թե՞ դատապարտում է ժողովրդի արդար բողոքը այս կապակցությամբ, մանավանդ այն վեց տարիների ընթացքում, երբ ինքը թեմական խորհրդի նախագահն էր:

Ճիշտ հասկանալու եւ լուսաբանելու համար իրանահայության հասարակական եւ քաղաքական կյանքի զանազան կողմերը, անկարելի է հաշվի չառնել մի շարք խնդիրներ եւ հատկապես թեմերի անջատման պարագան, որին մենք անդրադարձել ենք «Պատմական իրողություններ իրանահայ թեմերի Ս. Էջմիածնից անջատման մասին» գրությամբ, լույս

# եւ իրականությունը

տեսած «Յոյս» երկշաբաթաթերթի 67-րդ եւ «**Ազգ**» օրաթերթի 2010 թ. փետրվար 27-ի համարներում: Սակայն պետք է ավելացնել, որ «1931-ից» որոշ շրջանակներ փորձում էին հակադրել Անթիլիասը Էջմիածնին» («Էջմիածին» ամսագիրը 1959 թ. նոյ. էջ 20), այս նպատակն իրագործելու համար դիմում են տարբեր մեքենայությունների՝ ընդհուպ ԱՄՆ-ի թեմի առաջնորդ Տ. Ղեւոնդ արք. Դուրյանի սպանությունը կիրակնօրյա պատարագի ընթացքում, այս կապակցությամբ Երեւանում լույս տեսնող «**Ազգ**» օրաթերթը 2009թ. փետ. 18-ի համարում զետեղել է, Նյու Յորքից Հակոբ Վարդիվառյանի «Տխուր անդրադարձ Հայ Եկեղեցվոյ բաժանման» խորագրով հոդվածը:

Ստորեւ մեջբերենք մի քանի քաղված սույն հոդվածից:

«Եռագոյնի գործածութեան հարցը, որ առաջնորդած էր Դուրեան սրբազանի նահատակութեան, մեր ժողովուրդին գիտակից ու հայրենասէր զանգուածին կողմէ կ'արգիլուի գործածուելէ որպէս ազգային դրօշ: Ամերիկայի մէջ արդէն Դուրեան սրբազան արգիլած էր զայն Մայր աթոռի հրահանգովն իսկ:

Ինչպէ՞ս տեղի ունեցաւ սպանութիւնը: Պատարագիչ Դուրեան սրբազան եկեղեցւոյ մէջ հազիւ նստարաններու հինգերորդ շարքը կը հասնէր, երբ խումբ մը մարդիկ կը շրջապատէին զինք: Անոնցմէ երկուքը մէկդի կը հրէին սարկաւագները ու կը բռնէին սրբազան առաջնորդը, եւ ուրիշներ որովայնէն կը դաշունահարէին զայն, իսկ միւս դաւադիրները պատուար կը կազմէին ժողովուրդէն ծածկելու համար պատահածը:

Յառաջ տարուող քննութեանց մէջ նկատի կ'առնուէր, թէ դաւադրութիւնը Բոստոն սարքուած էր, ուր կը գտնուէր ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի կենդրոնատեղին:

Յուլիս 7, 1934-ին, Նիւ Եորքի մէջ կը սկսի... դատավարութիւնը... Ինը դաշնակցականներ յանցապարտ կը հռչակուին իբրեւ մարդասպան»:

Նույն դավադրական սպանության կապակցությամբ 2009 թվին հրատարակվել է ամերիկացի լրագրող Թերրի Ֆիլիպսի «Սպանություն խորանի մոտ» խորագրով, իրական իրադարձությունների հիման վրա գրված եւ մեծ աղմուկ բարձրացրած գեղարվեստական ստեղծագործությունը:

2009թ. մարտի 31-ին Ամերիկայում տեղի ունեցած սույն գրքի շնորհանդեսի ընթացքում, 75 տարվա տաբուի ու լռության քողը պատռելով, Թերի Ֆիլիպսը ասում է. «Բայց սա հայկական պատմություն չէ, սա համընդհանուր մարդկային ողբերգություն է, մարդկային պատմություն է բռնության մասին, երբ մարդիկ քաղաքական կամ կրոնական խնդիրները լուծում են սպանության միջոցով»: Գիրքը սկսվում է այն մարդու նկարագրությամբ, ով մեղադրվում է սպանության մեջ. «Մաթեւոս Լեյլեջյանն առանձնապես բռնակալ մարդ չէր: Իր զինվորական ծառայությունից դուրս նա երբեք լրջորեն չէր վնասել որեւէ մեկի, երբեք չէր խախտել որեւէ օրենք, երբեք ձերբակալված չէր եղել եւ հաստատապես երբեք սպանություն չէր գործել: Բայց այդ ամենը պետք է փոխվեր»: Եվ ավելացնում է. «...ԱՄՆ-ի կառավարության համար դժվար էր դատապարտել սպանության մեղադրանքով ձերբակալված 9 մարդկանց՝ դաշնակցականների պատճառով, որովհետեւ նրանք դեմ էին Սովետական Միությանը, եւ դա ուներ իր քաղաքական իմաստը» (www.hetqonline.am 01/04/2009):

Դաշնակցականների անսանձ աշխատանքի հետեւանքով, հակառակ իրանահայության ճնշող մեծամասնության կամքին, 1958թ. Իրանի երեք թեմերը անջատվեցին Ս. Էջմիածնից, որի հետեւանքով իրանահայությունը, որ ֆիզիկապես ամենամոտն էր Հայաստանին ու Ս. Էջմիածնին, մնաց ամենահեռվում:

Իրանահայությունը երբեք հակաէջմիածնական չի եղել, նա դարեր շարունակ Հայաստանից հեռու ապրելով հանդերձ, պահպանել է իր լեզուն ու մշակույթը, եկեղեցին ու դպրոցը: Միշտ իր հայացքը ուղղել է դեպի հայության օրրան Հայաստանն ու նրա սրտում տեղակայված Ս. Էջմիածինը:

### ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

Ահարոնյանը հուշերի էջ 1057-ում գրում է.««հայ» ձախակողմյանները Իրանում երկու խմբի էին բաժանված՝ «Թուդե» (Իրանի ձախ, համայնավար կուսակցություն) կուսակցության անդամները եւ Սովետական Հայաստանի կողմնակիցներն ու համակիրները»:

Այս դասակարգումը, ինչպես գրքում տեղ գտած շատ նման դատողություններ, խիստ թերի եւ մակերեսային է, թեեւ նրանում կա ճշմարտության խեղաթյուրված մի բաժին: Բանն այն է, որ «Սառը պատերազմի» տարիներին Իրանում «Փահլավիների», իսկ իրանահայության մեջ դաշնակների մենաշիրության պայմաններում ցանկացած այլախոհություն որակվում էր «ձախ» եւ ենթարկվում հալածանքի: Մեր՝ հայերիս պարագային դաշնակցականների կողմից «ձախ» կամ «թուդեի» էին որակվում անխտիր բոլոր այն հայերը, ովքեր համակրում էին Սովետական Հայաստանին եւ դրանով իսկ հակադրվում էին Դաշնակցության հակահայաստանյան քաղաքականությանը: Դա ձեռնտու էր Դաշնակցությանը, այն պարզ պատճառով, որ մինչեւ «Թուդե» կուսակցության գործունեության դադարեցումը, որը վարում էր սովետամետ քաղաքականություն, փաստորեն հանդիսանում էր շահի վարչակարգին սպառնացող մեծագույն վտանգը եւ ամենից առավելն էր ենթակա ռեժիմի դաժան հալածանքներին: Իրանում կային, իհարկե, «Թուդե» կուսակցության հայ անդամներ, եւ հավանաբար հենց նրանք էին Դաշնակցության ամենաուժեղ հակառակորդները, սակայն կային նաեւ ռամկավարներ ու հնչակյաններ, Իրանում գործող այլ կուսակցությունների եւ հոսանքների անդամներ ու համակիրներ, անկախ մտավորականներ եւ գործիչներ, որոնք հավասարապես հալածվել են Դաշնակցությանը չհարելու կամ քննադատելու պատճառով եւ առանց բացառության պիտակվել որպես նախկին Խորհրդային Միության գործակալներ:

Վերոհիշյալ դառն իրողության որպես վկա ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում ժամանակին ՀՅԴ-ի օրգան «Հայրենիք» ամսագրի 1924 դեկտեմբերի եւ 1925 հունվարի համարում միացյալ տպագրված հետեւյալ լուրը.

«Խորհրդային աշխարհից դուրս գալով արտասահման՝ մենք տեսնում ենք ժողովրդի ավելի գործոն մասնակցություն հանրային կյանքին, քան այդ նկատվում է բոլշեւիկյան տիրապետության տակ: Այսպես՝ պարսկահայ գաղութը անմիջական մասնակցություն ունեցավ պետական վերջին հեղաշրջման՝ թե իր ներկայացուցիչներով Սահմանադիր ժողովում, թե Ռիզա Խանի գահակալության արարողության դեկտեմբերի 16-ին եւ թե հետագա հանդեսներին: Տոնակատարությունները հատկապես հանդիսավոր եղան Թավրիզում, ուր հայ ներկայացուցիչները, առաջնորդ Ներսես արք. Մելիք Թանգյանի գլխավորությամբ, առարկա եղան հատուկ ուշադրության ու համակրանքի՝ պարսից իշխանությունների կողմից:

Թավրիզում եւ Թեհրանում՝ բոլշեւիկյան պրոպագանդի ամբաստանությամբ բռնված հայերը (հնչակյաններ, առեւտրականներ եւ բոլշեւիկություն խաղացող մի շարք խաներ ու մտավորականներ) մոտ մի ամիս բանտարկված մնալուց հետո ազատ արձակվեցան: Մի խումբ հնչակյաններ միայն, որոնց մոտ բռնվել էին վարկաբեկիչ թղթեր, որպես բոլշեւիկյան գործակալներ, աքսորվեցին Արտեբիլի բանտը: Առհասարակ, պարսից իշխանության որդեգրած հակաբոլշեւիկ կտրուկ քաղաքականությանը իբրեւ արդյունք՝ հայկական շրջաններն էլ դարձել են ավելի զգույշ: Այդ աչքի ընկավ առանձնապես Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ, երբ թե Թեհրանում եւ թե Թավրիզում հայ քվեատուների ճնշիչ մեծամասնությունը իր ձայնը տվեց Հ.Հ.Դաշնակցության թեկնածուներին»:

Կարծում ենք, որ դաշնակների այս ցնծության ճիչը մեկնաբանության կարիք չի զգում, որովհետեւ այն ամենապարզ ու անքող կերպով բացահայտում է կուսակցության քաղաքական վարքագծի ամենաբնորոշ գծերը ոչ միայն Իրանում, այլ նաեւ ամբողջ սփյուռքում: Եվ ինչքան էլ փորձեն դաշնակցականները Իրանում հաստատված իրենց մենաշիրությունը ներկայացնել որպես ժողովրդի մեջ վայելած համակրանքի արդյունք, դա նրանց չի հաջողվի: Նրանք այդ մենաշիրությունը ստացել են բռնությամբ Իրանի գահին տիրացած Ռիզա Խանի եւ ապա նրա որդու հակախորհրդային քաղաքականությանը հավատարմորեն ծառայելու որպես հատուցում, ավելի ճիշտ, որպես միջոց, իսկ Դաշնակցությունը այդ միջոցը լիուլի ծառայեցրել է իր բոլոր տեսակի հակառակորդներին Իրանահայ հանրային կյանքից դուրս մղելու եւ իսպառ չեզոքացնելու գործին:

«Լույս» երկշաբաթաթերթի 2000 հունիսի 15 թվակիր 6-րդ համարում Ահարոնյանի ստորագրությամբ հրատարակված «Մի ակնարկ իրանահայ ազգային կյանքին» հոդվածում նա մակերեսային մոտեցում է ցուցաբերել 20-րդ դարի սկզբից իրանահայ հասարակական քաղաքական կյանքում դերակատար կուսակցությունների նկատմամբ, եւ հրապարակել է վերը նշված տեսակետը հայ ձախերի մասին: Սույն հոդվածում նա իսլամական հեղափոխությունից հետո իրանահայ կյանքում ասպարեզ նետված բոլոր տարրերին միանշանակ համարում է «ազգային դրվածքի կամ իշխանության» թշնամիներ, օտարի գործակալներ եւ այլն, եւ ավետում է ընթերցողին, որ փարատվել են մտահոգությունները, որովհետեւ չկա այլեւս Խորհրդային Միությունը, Հայաստանը ազատ է ու անկախ, եւ հայ ձախերը մնացել են անտեր ու անպաշտպան, իսկ վերջում անդրադարձել է միաբանության անհրաժեշտությանը:

Թեհրանում հրատարակվող «Արաքս» ամսագիրը իր 2000 հուլիս թվակիր 89-րդ համարում, «Նոր բառապաշար է պետք կամ ակնարկ Լեւոն Ահարոնյանի ակնարկին» խորագիրը կրող հոդվածում վերլուծելով Ահարոնյանի վերոհիշյալ գրությունը, կատարել է մի շարք ուշադրության արժանի պարզաբանումներ: Այդ հոդվածում կարդում ենք. «Բացահայտ իրողություն է. որ Հայաստանի խորհրդայնացումից այս կողմ՝ մինչեւ Խորհրդային Միության փլուզումը, ոչ միայն իրանահայության, այլ նաեւ ամբողջ սփյուռքի քաղաքական կյանքը սահմանագծվել էր հայաստանական եւ հակահայաստանական դիրքորոշմամբ: Այսինքն՝ Հայաստանի նկատմամբ որդեգրած դիրքորոշումով, ըստ որում հայաստանյան կողմնորոշում են ունեցել, ոչ միայն հայ ձախերը, այլ նաեւ այնպիսի աջակողմյան լիբերալ կուսակցություն, ինչպիսին է Ռամկավար կուսակցությունը:

Փաստն այն է, որ իրանահայ «ձախերի» ճնշող մեծամասնությունը եւ հատկապես ժողովրդական զանգվածները երբեք չեն պատկանել ոչ մի կուսակցության, այլ դեպի Հայաստան եւ Սուրբ Էջմիածին կողմնավորվել են միայն ու միայն հայրենասիրական մաքուր զգացումներից ելնելով: Նրանք ոգեշնչվել ու հպարտացել են Երեւանի սրտում վեր խոյացած Սասունցի Դավթի հոյակերտ արձանով, Մատենադարանով, հայրենիքից հնչող երգ ու երաժշտությամբ, Չարենցով, Կապուտիկյանով, Սեւակով, Խաչատրյանով, Սարյանով, Համբարձումյանով եւ երբեք չեն հաշտվել ու չեն հաշտվելու Ամենայն հայոց կրոնական Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից իրանահայ թեմերի բռնի անջատման հետ: Եվ այս ամենը ուրանալով՝ ամեն ինչ խցկել «թուդե» բառի շրջափակում, միտումնավոր է եւ անազնիվ»:

Գուցե հենց այս հոդվածի բերումով էլ Ահարոնյանը իր հուշերում փորձել է ընդհանրապես անտեսել այս ծանրակշիռ «Արաքս» ամսագրի գոյությունը համայնքում:

Համաձայնելով «Արաքս» ամսագրի հոդվածագրի հետ՝ պետք է շեշտել, որ, իրանահայությունը միշտ էլ ամենաջերմ ու անշահախնդիր սիրով է կապված եղել Հայաստանին ու Ս. Էջմիածնին, նրան խանդավառել են Հայաստանի նվաճումները եւ տագնապի մատնել ձախորդությունները: Դժվարին պահերին իրանահայը միշտ եղել է Հայաստանի կողքին, արձագանքել նրա ամեն մի հայրենասիրական կոչին, եւ ամեն առիթ օգտագործելով միշտ ձգտել է ներգաղթել Հայաստան, անկախ այնտեղ տիրող վարչակարգից ու իշխանավորներից, ու նրանց աշխարհայացքից, իրանահայության համար կարեւորը հայրենիքն է՝ իր բոլոր սրբություններով:

Խոսենք փաստերով: 1982 թ. Թեհրանում լույս տեսած Ֆրանսիացի գրող Ժան Փիեր Ալեմի «Հայաստան» աշխատության հայերեն թարգմանության 51-րդ էջում կարդում ենք. «1828 թւին այս (Թուրքմենչայի) դաշնագրի հիման վրայ Պարսկաստանում ապրող բոլոր հայերը իրաւունք էին ստանում փոխադրուել Ռուսաստանին միացած շրջաններում հաստատուելու համար: Այս կարելիութիւնից օգտուեցին Ուրմիայի շրջանում ապրող շուրջ 35,000 հայեր:»

Իրանից Հայաստան զանգվածային ներգաղթ տեղի է ունեցել նաեւ 1920, 1946, 1960-ական թվականներին, եւ թեկուզ ավելի փոքր մասշտաբներով, շարունակվում է մեր օրերում: Ըստ հավաստի տվյալների, մոտավոր հաշիվներով 1922-1972 թթ. Իրանից Խորհրդային Հայաստան է վերադարձել 65,000 հայ:

Բ աշխարհամարտի տարիներին իրանահայությունը, ընդառաջելով երջանկահիշատակ Գեւորգ Զ. Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակին, իր համեստ լուման է ներդնում «Սասունցի Դավիթ» եւ «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծման ֆոնդում: Ինչպես նաեւ ոսկեզօծ սուր է նվիրում գեներալ Բաղրամյանին, որը այժմ գտնվում է Հայաստանի հեղափոխության թանգարանում:

Այժմ տեսնենք, թե ինչո՞ւ հեղափոխությունից հետո «երկպառակվեց իրանահայ համայնքը, ինչո՞ւ էին «ամենուր պայքարում կուսակցության, հոգեւորականների ու ազգային մարմինների դեմ»: Դրդապատճառները շատ էին: Անդրադառնանք մի քանիսին, մեջբերելով նաեւ «Փոթորկոտ կյանքիս օրերը» գրքի ծալքերում գրառված Ահարոնյանի հաստատումները: Նա գրում է. «Իրանի հեղափոխությունից առաջ «Սավաքի» (Իրանի նախկին վարչակարգի հատուկ ծառայություն) ցանկությամբ իրանահայ բոլոր ազգային հաստատությունները գտնվում էին դաշնակցականների գերիշխանության ներքո» (էջ 332 եւ 381), «Կուսակցությունը առանց հաշվի առնելու մեր ազնիվ ժողովրդին, պարտադրում է իր կամքը» (էջ 1095), «Հայ քաղքենի ազգայինները, ազդելով դաշնակցություն կուսակցության վրա, ազգային հաստատությունները դարձրել էին իրենց շահույթի աղբյուր ու ցուցամոլության կենտրոն» (էջ 332), «Թեմական խորհուրդը առանց պատգամավորական ժողովի տեղեկության, ազգապատկան գումարները ծախսում էր իր հայեցողությամբ» (էջ 784): Ահարոնյանը հաստատում է, որ թեմակալ առաջնորդը զրկված է ինքնուրույն որոշում կայացնելու իրավունքից (էջ 1194): Որ թեմական խորհուրդը, միջամտելով կրոնական խորհրդի իրավասության ներքո գտնվող աշխատանքներին, փորձում է արգելել այլախոհ երիտասարդների պսակադրությունը Հայ առաքելական եկեղեցում (էջ 996): Որ թեմականի որոշ աշխատանքները արժանանում են թեմակալ առաջնորդի նզովքին (էջ 999): Որ ապօրինաբար եւ թաքուն վաճառում էին ազգին կտակված բարերարների կալվածներն ու հարստությունը, եւ թաքցնելու համար իրական հաշիվները, ներկայացնում են շինծու հաշվետախտակ (էջ 784): Ահարոնյանը գրքի էջ 789-ից 791-ում վկայում է այդ մասին, մեջբերելով հետեւյալ օրինակը:

Տիկ. Էլմիս Քովանյանը իր բոլոր հարստությունը՝ բաղկացած չորս հարկում կառուցված բնակարանային համալիրից եւ... կտակում է թեմական խորհրդին, որպեսզի իր մահից հետո օգտագործվի իր անվամբ մանկապարտեզ կառուցելու համար... Նա իր կտակը իրականացնելու համար նշանակում է կտակակատար... 1997 թ. պատգամավորական ժողովներից մեկում թեմական խորհրդի զեկուցումից պարզվում է, որ վաճառել է այդ բնակարանը 14,000,000 թումանով... առանց կտակակատարի տեղեկության... այս զեկույցը զարմացնում է բոլորին...այդ համալիրի շուկայական իրական արժեքը վաճառման պահին եղել է առնվազն 70,000,000 թուման»:

Այսպիսին է ազգային կոչվող իշխանության գործունեությունը: Տարբեր մեքենայություններով ազգային հաստատություններ թափանցած ու բարձրագույն դիրքեր զբաղեցնող անձինք, իրենց անձնական շահամոլության կամ կուսակցական քաղաքականությունը իրականացնելու նպատակով, մոռանալով ամեն սրբություն, զլանում են անգամ 1988 թ. երկրաշարժի համար ժողովրդի կատարած մարդասիրական սրտաբուխ օգնությունները տեղ հասցնել:

Ահարոնյանը որպես «երկրաշարժի շտաբի» նախագահ, իր գրքի 1034-1035-րդ էջերում վկայում է. «Սգում էր աշխարհասփյուռ հայությունը...բազմաթիվ երկրներից առաքվում էին մարդասիրական օգնություններ... Թեմական խորհուրդը կյանքի կոչեց շտապ օգնության շտաբ... Հավաքված պարենային օգնությունները ուղարկվեցին Հայաստան, սակայն դրամական օգնությունները մնացին տեղում... իրանահայ երեք թեմերում հավաքված նյութական օգնությունները կազմեց 650-700 հազար ԱՄՆ դոլար... հետագայում հայտարարվեց, թե սույն գումարի հարյուր հազար դոլարը Ս. Էջմիածնում հանձնվել է երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսին»:

Անցան տարիներ, անկախացավ Հայաստանը, սակայն հավաքված գումարը չհանձնվեց հասցեատիրոջը աղետյալ գոտում:

Այնուհետեւ մոգոնեցին Ղափանում կառուցել ծորակաշինության գործարան (էջ 1035), որը եւ ունեցավ ողբերգական ավարտ (էջ 799):

*Շարունակելի*

ՀՐԱՉ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Թեհրան

# Մշակույթ

## «Սաստիկ կոմունիստներ»

### Լեռ Կամսարի գրական երկրորդ շնչառությունը Հ. Մալյանի անվան կինոդերասանի թատրոնում՝ «Սաստիկ կոմունիստներ» ստեղծագործության բեմադրությամբ





***Ինչպես հուշում է վերնագիրը. «սաստիկ կոմունիստական» ժամանակաշրջանի ոգեւորությամբ՝ ցուցապաստառներով, լոզունգներով ու երգով արարվում է բեմադրության սկիզբը: Եվ «օ սարսափ հանդիսատեսի», բեմի վրա երեք սպիտակ տակառ, վրան «Порох» գրությամբ, որը ներկայացման հիմնական դեկորացիան է՝ «ՉԿ»-ի՝ «Գաղտնի բաժնի» աշխատանքային սեղանները: Երեք տակառ, որոնք կարծես թե խորհրդանշում են ժամանակի Անդրֆեդերացիան՝ Վրաստան, Ադրբեջան, Հայաստան:***

***Ժամանակի շնչով ինչ-որ «չեկիստի» չնեղացնելու համար գնդակահարում են «բանդիտ» հարեւանին: Գնդակահարություններ... պարզվում է, մարդը անմեղ է՝ անգրագետ բեռնակիր, որը կուսակցական լոզունգի կտորից իր համար անդրավարտիք է կարել, եւ լոզունգի կարեւոր հատվածը համընկել է իր մարմնի «կարեւոր մասի» հետ: Լեռ Կամսարի կծու հումորը համեմվում է կերպարների գրոտեսկի հասնող դերասանական խաղով:***

***«ՉԿ»-ի ղեկավարներն ու աշխատակիցները ամենուր հականեր են փնտրում, հաշվառում նավերով Սովետմիություն եկող հավանական գնդակահարվողներին:***

***Համան վերից՝ ինչ-որ մտավորական հայ է Մարսելից ժամանելու Բաթում-Երեւան հասնելու համար, պետք է ցուցաբերել սարսափելի վերաբերմունք: Բաթումի «ՉԿ»-ի ղեկավարը չի հասցնում ընկալել սարսափելի լավ, թե սարսափելի վատ վերաբերմունք: Եվ դա էլ դեռ բավական չէ, պարզվում է, որ «դաշնակ» է:***

***Արհմիութենական պատիվ՝ ճառ-միտինգ՝ ի պատիվ հայ մտավորականի, որի համար կարդացվում է հին մի ճառ նվիրված ինչ-որ Ախունդովի (տիպիկ վրացական մոտեցում), նմանապես հին մի ողջույնի ճառ էլ մտավորականի կողմից: Հանգուցալուծումը իրականացվում է «Կին բաժնի» կողմից՝ հրաման ստանալով ամեն հնարավոր եւ անհնարին միջոցով այդ «դաշնակին» դարձնել «կոմունիստ»: Պարզվում է՝ նա էլ պատրաստ է «Կին բաժնի» Լիզայի մեկ համբույրի դիմաց դառնալ կոմունիստ:***

***Դերասանական պաթետիկ-գրոտեսկային խաղ, կերպարներ որոնց խաղ-ծաղրը անթաքույց է, պարզ, հասկանալի, ցավոք՝ նաեւ զգուշացնող:***

***Սակայն հարցերն ուղղենք բեմադրող ռեժիսոր Մովսես Ստեփանյանին:***

**- Ինչո՞վ է պայմանավորված հեղինակի, եւ գրական նյութի ընտրությունը:**

- Պատմվածքներ ունեի, որոնց հիման վրա ցանկանում էի ֆիլմ նկարահանել: Որոշ դժվարությունների պատճառով միտքս փոխեցի, որոշեցի բեմադրել: Ներկայացումն արդեն սկսել էի, երբ ծանոթացա Լեռ Կամսարի թոռնուհու՝ Վանուհի Թովմասյանի հետ: Վանուհին ինձ տվեց Լեռ Կամսարի անտիպ գործերից մեկը՝ «Սաստիկ կոմունիստներ» պիեսը, որը նրա շնորհիվ նոր էր տպագրվել: Սկզբում ցանկանում էի պիեսը պատմվածքներին միացնել, հետո հասկացա, որ այնքան ամբողջական է, որ իմաստ չունի: Զգացի որ սա թատրոն է, «կամսարյան» թատրոն:

Պիեսը ժամանակակից հնչեղություն ունի, չնայած գրվել է 1926թ.: Դա էր պատճառը, որ ես ընտրեցի այդ գործը:

**- Ստացվում է՝ կա նյութի ժամանակային կապ այսօրվա հետ, այսինքն՝ «բոլշեւիկյան հոգեբանության» արտացոլումը մեր օրերում:**

- Կարծես թե այդ հոգեբանությունը այսօր էլ կա եւ պետք է դրա մասին խոսվի, որովհետեւ, երբ չարիքի սերմը կա եւ նկատելի է, անմիջապես պետք է այն կանխել: Թատրոնն էլ կանխիչ գործիքի մի մասն է:

**- Կերպարների պաթետիկ-գրոտեսկային վիճակը Ձեր մոտեցո՞ւմն է, թե՞ դերասաններն իրենց մոտեցումներն ունեին:**

- Անշուշտ, դա ռեժիսորական մոտեցում է: Ընդհանրապես, կոմեդիան պետք է գրոտեսկի մեջ լինի, այլապես կդառնա առօրյա կատակ, այսինքն՝ պետք է գեղարվեստական լուծում ստանա:

**- Հանդիսատեսը դահլիճից հեղինակային խոսքի (Լեռ Կամսարի) կարիքն ունի: Ինչո՞վ է պայմանավորված գրական նյութի կրճատումը:**

- Կերպարները շատ են, իսկ մեր դերասանական կազմը՝ քիչ, մի դերասանը երկու, երեք դեր է խաղում, բայց դա հաճելի է, քանի որ հնարավորություն ունեն ավելի բացահայտվելու: Սուղ պայմաններից ելնելով՝ մենք ի վիճակի չենք դերասաններ հրավիրելու:

**- Լեռ Կամսարի ստեղծագործություններից Երեւանում բեմադրվե՞լ է:**

- Բեմադրվել է վաղուց, Պարոնյանի անվան թատրոնում, սակայն շատ քիչ է խաղացվել:

**- Ըստ Ձեզ՝ որպես ռեժիսորի, որքանո՞վ է ստացվել ներկայացումը:**

- Ռեժիսորը միշտ էլ թերություններ տեսնում է եւ փորձում է շտկել: Որոշ բաներ ստացվում են, որոշ բաներ՝ ոչ, քանի որ կերպարն արդեն դերասանինն է: Ես փորձում եմ անել ամեն ինչ, որ ներկայացումը ամբողջական լինի:

***Զրուցեցինք դերասանների հետ, ովքեր միեւնույն հարցի վերաբերյալ ունեին յուրովի մոտեցումներ:***

**- Կերպարի գրոտեսկը որքանո՞վ է ստացվել:**

**Դերասան Լեւոն Մելոյան**. «Դեռ չի ստացվել: Գրոտեսկ ասվածը ես ուրիշ կերպ եմ պատկերացնում, ռեժիսորը՝ ուրիշ: Ես կարող էի շատ ավելի գրոտեսկային ներկայացնել, բայց ռեժիսորը ասում է՝ այսպես լավ է, բայց ինձ չի գոհացնում, դեռ շատ պետք է աշխատենք»:

Դերասան Լեւոն Ղազարյան. «Լեռ Կամսարը կերպարները հետաքրքիր կերպ է մեկնաբանում: Ինձ համար հետաքրքիր է իմ կերպարը: Սա վերջը չէ, հնարավորություն կա այս կերպարը դարձնելու ավելին, ինչ հիմա է: Լեռ Կամսարի գրածը թույլ է տալիս, եւ ինձ թվում է՝ ավելի լավ կլինի»:

**- Ձեր կարծիքը ներկայացման մասին:**

**Դերասան Արա Սարգսյան**. «Նյութը ամբողջությամբ վերցրած չէ, նյութի կառուցվածքից շատ բան է պակասում, կարող էր ավելի հարուստ լիներ: Լեռ Կամսարը հրաշալի երգիծաբան է, եւ ափսոս է նյութից հատվածներ կորցնել»:

***Ներկայացման մասին զրուցեցինք նաեւ Լեռ Կամսարի թոռնուհու՝ Վանուհի Թովմասյանի հետ:***

**- Ըստ Ձեզ՝ հաջողվե՞լ էր բեմադրության մեջ ներկայացնել ստեղծագործության ոգին, եւ բեմադրական պաթետիկ ոճը օգնե՞լ, թե՞ խանգարել էր գրական նյութի ընկալմանը:**

- Դերասանները շատ լավ են խաղում, ռեժիսուրան շատ լավ է: Գործողությունները շատ արագ են զարգանում: Ստեղծագործության ոգին արտահայտված է, բայց ինչ-որ թերի բան կար, որը ես չեմ կարողանում գտնել: Գուցե ավարտն է:

**- Ռեժիսորը հարազա՞տ է մնացել գրական նյութին:**

- Այնտեղ մի քանի պասեր ռեժիսորը բաց է թողել, պատճառը դերասանական կազմի անբավարար լինելն է, բայց ասելիքը ասաց:

**- Ձեր կարծիքը բեմադրության մասին:**

- Ռեժիսուրան ինձ շատ դուր եկավ, դերասանները շատ լավ են խաղում: Ուղղակի չգիտեմ, ներկա սերունդը, որը սովետական կարգերում չի ապրել, ինչպե՞ս կհասկանա: Ես ապրել եմ այդ ժամանակներում, գիտեմ: Այնտեղ գաղտնի բաժին կա, «ՉԿ»-ի արած անօրինականություններ, ես ընկալում եմ, բայց նոր սերունդը ինչպե՞ս կընկալի:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

## «Մանկական Եվրոտեսիլ 2010»-ի հաղթող Վլադիմիր Արզումանյանը շնորհավորանքներ եւ նվերներ ստացավ Orange-ից

Վլադիմիր Արզումանյանը եւ Hip-Hop Life պարային խմբի անդամները, ովքեր փայլուն կերպով ելույթ ունենալով Մինսկում կայացած «Մանկական Եվրոտեսիլ 2010» երգի մրցույթում՝ զբաղեցրին առաջին տեղը, հյուրընկալվեցին Հայաստանում միջոցառման հեռարձակման պաշտոնական գործընկեր Orange-ի կողմից: Մեծ հաղթանակի առթիվ ընկերության գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**




Orange-ի կողմից պատանի արտիստներին հանձնեց գեղեցիկ բրենդավորված դպրոցական պայուսակներ եւ դրամապանակներ, Վլադիմիրին՝ iPad, իսկ Hip-Hop Life-ի անդամներին՝ հեռախոսներ: Հանդիպման ընթացքում պատանիները նաեւ հայտնեցին իրենց «եվրոտեսիլյան» տպավորությունները:

«Մենք ուրախ ենք լինել այսպիսի մեծ ժողովրդականություն վայելող համաեվրոպական երաժշտական մրցույթի պաշտոնական գործընկերը Հայաստանում: Ամբողջ Հայաստանը միասին մեծ հետաքրքրությամբ ու լարվածությամբ հետեւեց այս միջոցառմանը՝ հիանալով հայ մասնակցի գեղեցիկ ձայնով, վարպետությամբ եւ բեմական կեցվածքով: Շնորհավորում ենք բոլոր նրանց, ովքեր օգնել են Վլադիմիրին եւ իր ընկերներին նվաճել այս հաղթանակը, ինչպես նաեւ շնորհավորում եմ Հայաստանին այս աննախադեպ հաջողության համար», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

Orange-ը, երաժշտությունը դիտարկելով որպես համախմբող ուժ, աջակցում է Հայաստանում այնպիսի երաժշտական միջոցառումների, որոնք հետաքրքրում եւ միավորում են իր բաժանորդներին, ինչպես նաեւ թույլ են տալիս Հայաստանը ներկայացնել եվրոպական բեմերում:

## Գուգարաց թեմի «Վարդանանց հերոսներ» փողային նվագախմբի հոբելյանական համերգը

Նոյեմբերի 14-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում տեղի ունեցավ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Գուգարաց թեմի փողային նվագախմբի հոբելյանական համերգը՝ նվիրված նվագախմբի հիմնադրման 10-ամյակին:

1988 թ. ավերիչ երկրաշարժի հետեւանքով իրենց գործունեությունը դադարեցրին մի շարք երաժշտական կոլեկտիվներ, այդ թվում քաղաքի բոլոր փողային նվագախմբերը, որոնց թիվը հասնում էր 15-18-ի: Տասը տարի շարունակ իսպառ դադարեց փողային երաժշտությունը, անհետացան գործիքներ: Անհրաժեշտ էր փողային երգարվեստը գնահատող հոգատար անձ: Եվ 2000թ.-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, կարեւորելով փողային երաժշտության դերն ու նշանակությունը, ձեռնամուխ եղավ «Վարդանանց հերոսներ» փողային նվագախմբի կայացման գործին: Թեմի նյութական միջոցներով ձեռք բերվեցին մեծաքանակ փողային գործիքներ եւ երաժշտական գրականություն: Թեմակալ առաջնորդի անմիջական նախաձեռնությամբ Միացյալ Նահանգներից բերվեցին 50 բարձրորակ տարբեր տեսակի թմբուկներ, որոնք առանձնակի շուք են հաղորդում քաղաքային եւ մարզային տոնակատարություններին եւ շքերթներին: Այսօր նվագախումբը ապահոված է արտասահմանյան արտադրության անհրաժեշտ գործիքներով, գույքով եւ հանդերձանքով:

Նվագախմբի գործունեության տասը տարիներն անցել են տքնաջան աշխատանքով վաստակած հաջողություններով ու նվաճումներով: Ստեղծման տարիներին նվագախմբի կազմում ընդգրկված էին ընդամենը 14-16 երաժիշտներ, իսկ այսօր արդեն նվագախումբը իր տասներորդ հոբելյանը դիմավորում է շուրջ 30 երաժիշտներով: Գործունեության ընթացքում նվագախումբը մասնակցել է համահայկական, հանրապետական ու միջազգային բազմաթիվ փառատոների, արժանացել մրցանակների ու պատվոգրերի (2004 թ., Երեւան, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոն, 2009 թ., Աջարիա-Բաթում. միջազգային ֆոլկլորային փառատոն, 2010 թ., Բաթում. «Ոսկե դելֆին» միջազգային փառատոն եւ այլն):

Միջոցառմանը նվագախմբին իր օրհնության եւ բարեմաղթանքի խոսքն ուղղեց թեմակալ առաջնորդը: Բազմաթիվ շնորհավորանքի եւ երախտագիտության խոսքեր հնչեցին նաեւ մարզպետարանի, քաղաքապետարանի ներկայացուցիչների, ինչպես նաեւ նվագախմբի նախկին սաների եւ ծնողների կողմից:

Համերգը ղեկավարում էին նվագախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր խմբավար Մելս Մատինյանը եւ նվագախմբի խորհրդատու-խմբավար Վլադիմիր Ռապացկին:

Համերգին մասնակցություն ունեցան Գուգարաց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու եւ քաղաքապետարանի կամերային երգչախումբը, Ստեփանավանի եւ Դիլիջանի քաղաքապետարանների փողային նվագախմբերը, Վանաձորի կայազորի զինվորական նվագախումբը: Հնչեցին «Սասունցիների պար», «Հարսանեկան քայլերգ», «Զինվորական քայլերգ», Ռավելի «Բոլերո» եւ այլ ստեղծագործություններ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

## Ճշտում

Նոյեմբերի 20-ի համարում, ազգագրագետ Աշխունջ Պողոսյանի ասուլիսը լուսաբանելիս՝ «Ինչո՞ւ չունենք գորգերի ազգային թանգարան» վերնագրով թղթակցության մեջ տեղ են գտել սխալներ: «Պազիրիկ» գորգի վրա հայերեն գրություն լինել չէր կարող. այն գործվել է մոտ 2500 տարի առաջ: Հայաստանի ազգագրության պետական թանգարանում էլ մոտ 2000 գորգ է, 4500 գորգ Հայաստանի բոլոր թանգարաններում է», ճշտեց ազգագրագետը՝ խնդրելով լրացուցիչ հաղորդագրություն տպագրել: Ինչը անում ենք՝ վրիպումների համար ներողություն խնդրելով:

# Մարզական

## Էլեն Գրիգորյանն ու Ալլա Սամվելյանն առաջին մեդալները պարգեւեցին Հայաստանին

### *Սմբատ Մարգարյանն անհաջողության մատնվեց*

Կիպրոսի Լիմասոլ քաղաքում մեկնարկել է մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկանների ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը: Այդ մրցումներին Հայաստանը ներկայացել է 19 ծանրորդով: Հայաստանի պատվիրակներից առաջինը մրցասպարեզ դուրս եկավ մինչեւ 53 կգ քաշային Էլեն Գրիգորյանը, որը հայտավորված էր մինչեւ 23 տարեկանների մրցաշարում: Հետաքրքրական է, որ քաշային այդ կարգում ընդամենը երեք մարզուհի էր մասնակցում մրցումներին, այնպես որ դեռեւս պայքարի մեջ չմտած, նրանք իրենց համար ապահովել էին մեդալները: Մնում էր որոշել չեմպիոնուհուն:

Պոկում վարժությունը հայ մարզուհին սկսեց 72 կգ-ից՝ հաջողությամբ բարձրացնելով ծանրաձողը: Ցավոք, հաջորդ 2 փորձերի ժամանակ նա չկարողացավ իրեն ենթարկել 80 կգ-անոց ծանրաձողը, որի արդյունքում այդ վարժությունում ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով: Լավագույն արդյունքը ցույց տվեց գերմանուհի Յուլիա Ռոդեն՝ բարձրացնելով 83 կգ: Բրոնզե մեդալը բաժին հասավ ռուսաստանցի Ելենա Սուխարին՝ 70 կգ:

Հրում վարժությունը Էլենը սկսեց 95 կգ-ից: Առաջին մոտեցումը հաջող էր: Երկրորդ մոտեցմամբ նա բարձրացրեց 102 կգ եւ երկամարտում ցույց տվեց 174 կգ արդյունք: Այդ պահին գերմանուհի մարզուհին առաջին մոտեցմամբ բարձրացնելով 101 կգ, երկամարտում ցույց էր տվել 184 կգ արդյունք՝ փաստորեն վճռելով ոսկե մեդալի բախտը հօգուտ իրեն: Երկրորդ մոտեցմամբ Ռոդեն բարձրացրեց 105 կգ եւ երկամարտի արդյունքը հասցրեց 188 կգ-ի: Էլենին մնում էր միայն պայքարել հրում վարժության փոքր ոսկե մեդալի համար: Սակայն նա չկարողացավ իրեն ենթարկել 106 կգ-անոց ծանրաձողն ու երկամարտի 174 կգ (72+102) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոնուհի: Ռոդեն փորձեց երրորդ մոտեցմամբ բարձրացնել 108 կգ, սակայն այս անգամ փորձն անհաջող էր: Բրոնզե մեդալակիր Ելենա Սուխարը ցույց տվեց 161 կգ (70+91) արդյունք:



*Էլեն Գրիգորյանը (ձախից առաջինը) պատվո պատվանդանին*

Հետաքրքրական է, որ եթե Էլեն Գրիգորյանի տարիքը թույլ տար ու նա մասնակցեր մինչեւ 20 տարեկանների մրցաշարին, ապա երկամարտի 174 կգ արդյունքով կգրավեր միայն 3-րդ տեղը: Այստեղ երկամարտի 183 կգ (78+105) արդյունքով Եվրոպայի չեմպիոնուհու հռչակվեց թուրք մարզուհի Այսեգուլ Կոբանը: Արծաթե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Անաստասիա Գուրտաեւան, որը երկամարտում ցույց տվեց 177 կգ (83+94) արդյունք: Բրոնզե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի մեկ այլ մարզուհի՝ Քրիստինա Սոբոլը՝ 173 կգ (80+93):

Բավական մեծ էին սպասելիքները մեր ամենահեռանկարային ծանրորդներից մեկից՝ Սմբատ Մարգարյանից, որը հանդես եկավ 56 կգ քաշային կարգում մինչեւ 20 տարեկանների մրցաշարում: Ցավոք, սպասելիքները չարդարացան: Սմբատը շատ անհաջող ելույթ ունեցավ: Անհաջողությունները հայ պատանուն հետապնդեցին հենց մեկնարկից:

Պոկում վարժությունում նա առաջին մոտեցմամբ իրեն ենթարկեց 101 կգ-անոց ծանրաձողը: Սակայն 2-րդ եւ 3-րդ մոտեցումների ժամանակ Սմբատը չկարողացավ բարձրացնել 106 կգ-ը: Այս անհաջողությունը Սմբատին շատ հետ թողեց մրցակիցներից: Բավական է նշել, որ պոկում վարժության ոսկե մեդալը նվաճած բելառուսցի Ստանիսլավ Չադովիչը հաղթեց 117 կգ-ով: 111 կգ արդյունքով արծաթե մեդալի արժանացավ թուրք Իսմեթ Ալգուլը: Բրոնզե մրցանակակիր դարձավ ռումինացի Ֆլորին Կրոիտորուն՝ 110 կգ:

Մեդալների հավակնելու համար Սմբատ Մարգարյանը ստիպված էր հրում վարժության համար պատվիրել ամենաբարձր նախնական քաշը՝ 139 կգ: Սակայն ինչպես ցույց տվեց մրցումների ընթացքը, դա 17-ամյա պատանու ուժերից վեր էր: Բոլոր երեք մոտեցումներն էլ անհաջող էին, որի պատճառով Սմբատը 0 ստացավ ու դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից:

Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում սա Սմբատի 4-րդ մեկնարկն էր միջազգային մրցաշարերում: Եվ առաջին անգամ Սմբատին անհաջողությունն ուղեկցեց: Հիշեցնենք, որ ապրիլին Մինսկում կայացած Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Մարգարյանը երկամարտի 255 կգ (109+146) արդյունքով դարձել էր արծաթե մրցանակակիր՝ ընդամենը 1 կգ-ով զիջելով Եվրոպայի չեմպիոն հռչակված բելառուս ծանրորդ Վիտալի Դերբենյովին:

Մայիսին Վալենսիայում կայացած Եվրոպայի պատանեկան առաջնությունում Սմբատը երկամարտի 240 կգ (105+135) արդյունքով չեմպիոն էր հռչակվել: Օգոստոսին էլ Սինգապուրում կայացած ամառային պատանեկան առաջին օլիմպիադայում հայ ծանրորդը երկամարտի 243 կգ (108+135) արդյունքով բրոնզե մեդալակիր էր դարձել:

Եվ այսպես, մինչեւ 56 կգ քաշային կարգում 20 տարեկանների մրցաշարում չեմպիոն հռչակվեց բելառուս ծանրորդ Ստանիսլավ Չադովիչը՝ 257 կգ (117+140): 2-րդ տեղը գրավեց ռումինացի Ֆլորին Կրոիտորուն՝ 242 (110+132): Բրոնզե մեդալակիր դարձավ ռուսաստանցի Ռայս Գաինուտդինովը՝ 240 կգ (104+136):

Մինչեւ 23 տարեկանների մրցաշարում երկամարտի 243 կգ (110+133) արդյունքով չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Պավել Սուխանովը: Արծաթե մեդալը նվաճեց ռումինացի Գաբրիել Օլարուն՝ 240 կգ (106+134): Նրան մեկ կգ-ով զիջեց բրոնզե մրցանակակիր, լեհ ծանրորդ Մաչեյ Պրժեպիորկեւիչը՝ 239 կգ (105+134):

Երեկ երեկոյան մրցահարթակ դուրս եկան մինչեւ 58 կգ քաշային կանայք: Մինչեւ 20 տարեկանների մրցավեճում Ալլա Սամվելյանը երկամարտի 180 կգ (73+107) արդյունքով զբաղեցրեց 6-րդ տեղը: Ալլան հաջող ելույթ ունեցավ հրում վարժությունում՝ 107 կգ-ով արժանանալով փոքր արծաթե մեդալի: Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ բելառուս մարզուհի Նատալյա Կոլասը՝ երկամարտում ցույց տալով 195 կգ (84+111) արդյունք: Արծաթե մրցանակակիրը Բելառուսի մեկ այլ ներկայացուցիչ էր՝ Իրինա Միշչուկը, որը երկամարտում ցույց տվեց 191 կգ (89+102) արդյունք: Բրոնզե մեդալին արժանացավ թուրք Ռաբիա Ջենգիզը՝ 189 կգ (85+104):

## Պովետկինը ռինգ կվերադառնա Ֆիրտայի հետ մենամարտում

Ռուսաստանցի գերծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Ալեքսանդր Պովետկինը դեկտեմբերի 18-ին Գերմանիայում ամերիկացի Նիկոլայ Ֆիրտայի հետ մենամարտում կնշի իր վերադարձը ռինգ: Ավելի քան կես տարի առաջ Ֆիրտային հրավիրել էին մենամարտելու Տոնի Գրանոյի հետ, որում պետք է վիճարկվեր բռնցքամարտի Հյուսիսամերիկյան ընկերակցության (NABA) չեմպիոնի տիտղոսը: Շատերի կարծիքով Գրանոն պարզապես ջախջախելու էր Ֆիրտային: Սակայն վերջինս անակնկալ մատուցեց, շատ լավ մենամարտ անցկացրեց ու բավական հեշտությամբ հաղթելով մրցակցին՝ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այդ հաջողությունը հնարավորություն ընձեռեց ամերիկացի բռնցքամարտիկին դասակարգման ցուցակի 189-րդ տեղից տեղափոխվել 44-րդ հորիզոնական: Եվ ահա այժմ «Երկաթյա մարդ» մականունն ունեցող Ֆիրտան պետք է մրցի Ալեքսանդր Պովետկինի հետ:



Պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի իր կարիերայում Ֆիրտան 27 մենամարտ է անցկացրել, որոնցում տոնել է 19 հաղթանակ, կրել է 7 պարտություն, մեկն ավարտել է ոչ-ոքի: Շատերի համար զարմանալի է, որ Պովետկինն ընտրել է Ֆիրտային: Սակայն եթե Պովետկինը դեռեւս չի փոխել իր որոշումը մրցելու Կլիչկո եղբայրների հետ, ապա Ֆիրտայի ընտրությունը ճիշտ է, քանի որ վերջինս 198 սմ հասակ ունի: Ռուս բռնցքամարտիկը մրցակցին զիջում է 10 սմ-ով եւ նրա հետ մենամարտում պետք է կարողանա իրեն համար տարածություն պահել:

Ռուսաստանցի մեկ այլ բռնցքամարտիկ՝ Դմիտրի Պիրոգը, որ հանդես է գալիս միջինքաշային կարգում, մտադիր է մենամարտել արգենտինացի Սերխիո Մարտինեսի հետ: Վերջինս օրերս ուրախացրեց իր երկրպագուներին՝ նոկաուտով հաղթելով Պոլ Ուիլյամսին եւ նվաճելով WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի գոտին: Եվ այժմ ռուս բռնցքամարտիկի ներկայացուցիչները փորձում են համաձայնության գալ HBO հեռուստաալիքի հետ Մարտինես-Պիրոգ մենամարտի կազմակերպման հարցում: Նշենք, որ Պիրոգը միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոնն է: Սակայն նրանց միջեւ մենամարտի անցկացումը քիչ հավանական է, քանի որ Պիրոգն օվկիանոսից այն կողմ մարզասերներին այնքան էլ հայտնի չէ: Նույն պատճառաբանությամբ քիչ հավանական է նաեւ Մարտինեսի հանդիպումը միջինքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ֆելիքս Շտուրմի հետ:

## Իսինբաեւան մտադրվել է գերազանցել Բուբկայի նվաճումը




**Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի, ձողացատկի աշխարհի ռեկորդը 27 անգամ թարմացրած Ելենա Իսինբաեւան իր առջեւ նպատակ է դրել գերազանցելու լեգենդար ձողացատկորդ Սերգեյ Բուբկայի ցուցանիշը, որն իր կարիերայում համաշխարհային 35 ռեկորդ է սահմանել: Ինչպես երեւում է, Իսինբաեւան արդեն պատրաստ է վերադառնալ մեծ սպորտ, որում ելույթներն ընդմիջել էր այս տարվա ապրիլին:**

**«Բուբկայի ռեկորդը գերազանցելն իրոք իմ գլխավոր նպատակն է: Այդ հարցում լեգենդար մարզիկն ինձ աջակցում է, նշելով, որ կուրախանա, եթե դա հաջողվի իրագործել: Բեռլինում կայացած աշխարհի առաջնությունից հետո, որտեղ անհաջողության մատնվեցի, ինձ մի տեսակ ֆիզիկապես քայքայված էի զգում: Ուստի որոշեցի ընդմիջել ելույթներս, մի փոքր հանգստանալ, վերլուծել տեղի ունեցածը: Այդ պարտությունը մեծ հարված էր ինձ համար: Սիրում եմ առաջինը լինել ամեն ինչում եւ նորանոր աշխարհի ռեկորդներ սահմանել: Եվ Ցյուրիխում նոր ռեկորդ սահմանեցի՝ 5,06 մետր», նշել է Իսինբաեւան:**

**Այդ հաջողությունից հետո Իսինբաեւան որոշեց մասնակցել Դոհայում կայացած աշխարհի ձմեռային առաջնությանը: Սակայն այստեղ եւս Իսինբաեւան անհաջողության մատնվեց: Դրանից հետո անվանի մարզուհին խորհրդակցելով իր մարզիչ Վիտալի Պետրովի եւ Սերգեյ Բուբկայի հետ, որոշեց որոշ ժամանակով դադարեցնել ելույթները ու մեկնեց հայրենի Վոլգոգրադ: Հունիսից նա արդեն վերսկսեց մարզումները: Սպասվում է, որ նա իր առաջին ելույթը կունենա 2011-ի փետրվարին «Ռուսական ձմեռ» փառատոնի շրջանակներում անցկացվելիք մրցումներում, որոնք տեղի կունենան Մոսկվայում: Իսինբաեւան մտադիր է հաղթող ճանաչվել թեթեւ աթլետիկայի ձմեռային եւ ամառային աշխարհի առաջնություններում:**

**«Մարզիչս ասում է, որ կարող եմ ցույց տալ 5,25 եւ նույնիսկ 5,30 մետր արդյունք: Ինքս պետք է հավատամ դրան, որպեսզի հոգեբանորեն պատրաստ լինեմ հաղթահարելու նման բարձրությունները: Կարեւոր է նաեւ, որ հովանավորները նման իրավիճակում չկրճատեն իրենց վճարումները: Այժմ ես լիովին պատրաստ եմ վերադառնալ մեծ սպորտ: Երբ ընդմիջում վերցրեցի եւ ապրում էի սովորական կյանքով, շատ էի կարոտում մրցումները: Գիտակցեցի, թե սպորտն իմ կյանքում որքան կարեւոր նշանակություն ունի», նշել է Իսինբաեւան:**

## Ֆեդերերի դիմանկարը բոլորից թանկ է գնահատվել

Լոնդոնում ընթացող 8 ուժեղագույն թենիսիստների մրցաշարում կայացան A խմբի հանդիպումները: Մրցաշարը հաղթանակով սկսեց հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ իսպանացի Ռաֆայել Նադալը: Նա բավական համառ մրցակցությունում պարտության մատնեց ամերիկացի Էնդի Ռոդիկին (3-6, 7-6, 6-4):

«Այս խաղում հաղթելը շատ կարեւոր էր: Այժմ հաջորդ հանդիպումը կարող եմ ավելի հանգիստ պայմաններում անցկացնել: Նույնիսկ եթե Ջոկովիչին պարտվեմ, դեռ հնարավորություն կունենամ պայքարելու կիսաեզրափակիչի ուղեգրի համար», խաղից հետո հայտարարել է Ռաֆայել Նադալը:

Խմբի մյուս խաղում սերբ Նովակ Ջոկովիչը հաղթեց չեխ Թոմաշ Բերդիխին (6-3, 6-3):

Մրցաշարի օրերին Լոնդոնում բարեգործական աճուրդ է կազմակերպվել, որում վաճառքի են հանվել 8 ուժեղագույն թենիսիստների դիմանկարները, որոնք պատրաստվել են ռակետների եւ գունավոր գնդակների միջոցով: Առայժմ բոլորից թանկը Ռոջեր Ֆեդերերի դիմանկարն է, որի համար առաջարկվել է 22100 դոլար: Թենիսիստների դասակարգման առաջատար Ռաֆայել Նադալի դիմանկարի գինը 20100 դոլար է: Առայժմ բոլորից քիչ գումար են առաջարկում Թոմաշ Բերդիխի դիմանկարի համար (2650 դոլար):

# Օրվա հետքերով

## «Ամերիաբանկն» առաջ է դուրս գալիս ըստ զբաղեցրած դիրքերի բանկերի վերլուծության արդյունքներով

Երեւան. «Ամերիաբանկն» առաջատար դիրքեր է զբաղեցնում համաձայն բանկերի վերլուծության արդյունքների՝ ըստ ՀՀ բանկային համակարգի միջինացված նշանակալից դիրքերի: Համաձայն Արմինֆո գործակալության անցկացրած՝ ՀՀ բանկային համակարգի վերլուծության՝ 2010 թ. 9 ամսվա արդյունքներով առաջին դիրքը, որը կարող էր զբաղեցնել բոլոր ուղղություններով ակտիվորեն աշխատող այսպես կոչված «ունիվերսալ» բանկ, առայժմ դատարկ է: 2009 թ. 4-րդ եռամսյակից սկսած թափուր է մնում նաեւ երկրորդ տեղը: Սակայն երրորդ տեղը, որը դեռ 2010 թ. երկրորդ եռամսյակում ազատ էր, այժմ զբաղեցնում է «Ամերիաբանկը», որը տարեկան կտրվածքով բարձրացել է երեք հորիզոնականով, իսկ երկու տարվա կտրվածքով (2008 թ. 3-րդ եռամսյակում 9-րդ էր) կտրուկ ցատկ է կատարել՝ փոքր բանկերի շարքից անցնելով միջին բանկերի շարքերը, ապա դառնալով առաջատարներից մեկը: Նշենք, որ սկսած 2009 թ. 2-րդ եռամսյակից բանկային համակարգի՝ ըստ զբաղեցրած դիրքի վերլուծությունում, ի լրումն նախկինում հաշվի առնվող ընդհանուր կապիտալի, ակտիվների, ընդհանուր վարկային ներդրումների, տնտեսական հատվածին տրված վարկերի, պետական արժեթղթերում ներդրումների, պարտավորությունների, ներգրավված միջոցների եւ չբաշխված շահույթի հաշվետու ժամանակաշրջանում (տվյալ վարկանիշային ցուցակում՝ 2010 թ. 9 ամսվա շահույթը) Արմինֆոյի վերլուծաբանները ներառել են նաեւ բանկերի դիրքերն ըստ լոռո եւ նոստրո հաշիվների, ֆիզիկական անձ հաճախորդներին տրված վարկերի, ցպահանջ պարտավորությունների, ժամկետային ավանդների, ներգրավված եւ տեղաբաշխված միջբանկային վարկերի եւ ավանդների: Այս քանակական վերլուծությունը ցույց է տալիս բացառապես այս կամ այն բանկի ակտիվության աստիճանը բանկային գործունեության բոլոր հատվածներում, այլ ոչ թե ցուցանիշների որակը, եւ չի կարող հիմք հանդիսանալ ներդումային որոշումների ընդունման համար: Ըստ վերլուծության՝ 2010 թ. 3-րդ եռամսյակի արդյունքներով երեք բանկեր զիջել են իրենց դիրքերը, մինչդեռ յոթ բանկերի դիրքերը մնացել են անփոփոխ: Չորրորդ հորիզոնականը կիսեցին երկու բանկ՝ ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկը եւ ՎՏԲ-Հայաստան բանկը: Առաջինը տարեկան կտրվածքով պահպանել է իր դիրքը, մինչդեռ երկրորդը երկու հորիզոնականով աճ է ցուցադրել: Հինգերորդ հորիզոնականը կիսել են Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանը (մեկ հորիզոնականով հետընթաց է ապրել տարեկան կտրվածքով) եւ «Արդշինինվեստբանկը» (տարեկան բարձրացում մեկ հորիզոնականով): Անցյալ տարվա յոթերորդ դիրքից վեցերորդն է դուրս եկել «Հայբիզնեսբանկը», մինչդեռ այդ դիրքը զբաղեցնող «Յունիբանկն» իջել է յոթերորդ հորիզոնական: Ութերորդ դիրքում հաստատվել է «Կոնվերս բանկը»: Իններորդ հորիզոնականը մնում է թափուր: «Առէքսիմբանկ»՝ «Գազպրոմբանկի» խումբը (տարեկան աճ երեք հորիզոնականով) եւ «Արցախբանկը» (տարեկան աճ մեկ հորիզոնականով) կիսեցին տասներորդ տեղը:

Տասնմեկերորդ հորիզոնականում են գտնվում երեք բանկ՝ «Հայէկոնոմբանկը», «Արարատբանկը» եւ «Ինեկոբանկը»: Ընդ որում, տարեկան կտրվածքով «Հայէկոնոմբանկը» զիջել է իր դիրքերը մեկ հորիզոնականով, «Արարատբանկը» երկու, իսկ «Ինեկոբանկը» մեկ քայլ վեր է բարձրացել: Տասներկուերորդ դիրքում է «Անելիք» բանկը: Հաջորդ հորիզոնականն ազատ է: Անցյալ տարվա տասնութերորդ դիրքից դեպի տասնչորսերորդ դիրքը թռիչք է կատարել «Մելլաթ» Բանկը: Տասնհինգերորդ հորիզոնականում է «Արմսվիսբանկը»: Իր դիրքերը տասնվեցերորդ հորիզոնականում պահպանել է Զարգացման հայկական բանկը (ADB): Տասնյոթերորդ հորիզոնականը կիսեցին Բիբլոս Բանկ Հայաստանը (տարեկան կտրվածքով իջել է երկու հորիզոնականով) եւ «Պրոմեթեյ» բանկը (պահպանել է իր դիրքերն անցյալ տարվա համեմատությամբ): Անցյալ տարվա տասնիններորդ դիրքից տասնութերորդն է բարձրացել «Պրոկրեդիտ բանկը», որը բանկային շուկա ներխուժեց 2008 թ. փետրվարին: Նրա նախկին դիրքն առայժմ ազատ է: Ռեյտինգը նորից եզրափակում է ԲՏԱ բանկը, որը 2010 թ. 2-րդ եռամսյակում զբաղեցնում էր տասնիններորդ, իսկ 2008 թ. 3-րդ եռամսյակում՝ տասնութերորդ հորիզոնականը:

**Արմինֆո, 17 նոյեմբերի**

## «Ամերիաբանկն» առաջարկում է կառուցվածքային ավանդի հատուկ պայմաններ

«Ամերիաբանկը» 100 տարվա պատմության կապակցությամբ շարունակում է 100 անակնկալների շարքը: Այս անգամ բանկն անց է կացնում կառուցվածքային ավանդի հատուկ ակցիա:

Ակցիայի շրջանակներում ֆիզիկական անձ հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում ներդնել ավանդ «Ամերիաբանկում», որը համարժեք է ամերիկյան Դոու Ջոնս բորսայական ինդեքսում ներդրումներին՝ առանց կորստի ռիսկի:

Ընթացիկ տարվա մինչեւ դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում «Ամերիաբանկն» առաջարկում է կառուցվածքային ավանդի նոր, առանձնահատուկ պայմաններ.

Ակտիվ ՝ Դոու Ջոնսի ինդեքս
Ավանդի նվազագույն գումարը՝ 10 000 $
Միջոցների վերադարձման երաշխիքը՝ 100%
Մասնակցության գործակիցը՝ 100%
Մարման ամսաթիվը՝ 30.12.11

«Ամերիաբանկի» կողմից դեռեւս 2010 թ. ապրիլ ամսից առաջարկված կառուցվածքային ավանդն առաջին անգամ Հայաստանում ավանդատուին հնարավորություն ընձեռեց դուրս գալ միջազգային ֆինանսական շուկաներ եւ գումարներ վաստակել նավթի, ոսկու, Դոու Ջոնսի ինդեքսի եւ այլ ակտիվների գների փոփոխությունից, առանց ներդրված գումարները կորցնելու ռիսկի եւ դեռ ավելին՝ ստանալ 2 մասից բաղկացած եկամուտ, որի առաջին մասը ստացվում է ավանդական բանկային ավանդի ներդրումից՝ ֆիքսված տոկոսադրույքով, իսկ եկամտի երկրորդ մասը ձեւավորվում է միջազգային շուկաներում՝ նշված ակտիվների գների փոփոխությունից:

Կառուցվածքային ավանդը, որպես եզակի բանկային ծառայություն ՀՀ ֆինանսական շուկայում, ակցիայի շրջանակներում առավել մեծ հնարավորություններ է ստեղծում գումարներ վաստակելու համար՝ առանց ներդրված գումարի կորստի ռիսկի:

***

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն կորպորատիվ, ներդրումային բանկ է, որն իրականացնում է կորպորատիվ եւ սահմանափակ մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային լուծումների ամբողջական փաթեթ: «Ամերիաբանկ»-ի տնօրենների խորհրդի նախագահն է պրն Ռուբեն Վարդանյանը, Տնօրենության նախագահ-գլխավոր տնօրենը՝ պրն Արտակ Հանեսյանը: «Ամերիաբանկ»-ի ռազմավարական գործընկերն է «Տրոյկա Դիալոգ» խումբը՝ Ռուսաստանի Դաշնության ամենամեծ ներդրումային ընկերություններից մեկը:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.ameriabank.am

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 07.03.03թ N 217-Ն և N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «ԵՐԵՎԱՆ-ՋՈՒՐ» ՓԲԸ Արզնիի ջրամատակարարման համակարգից սնվող Երևան քաղաքի և հարակից գյուղական բնակավայրերի ջրամատակարարման նպատակով ընկերությանը տրված N 2172 ՋԹ (1300 լ/վ) ժամկետի երկարաձգման և ջրառի մինչև 1800լ/վ ջրահոսքի ավելացման ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17:00-18:00-ն դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարության 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010թ. նոյեմբերի 29-ին, ժամը 16:00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 12:00–ին ՀՀ Երևան քաղաքի Աճառյան 41/3 հասցեում տեղի կունենա «ՋԻԳԻ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին պատկանող կաթսայատան աշխատանքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային Բորսայի հարթակում ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1, 5-րդ հարկ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 11.00-17.00-ն իրականացվում են հրապարակային սակարկություններ (աճուրդային վաճառք), այդ թվում լուծարվող «Շինուժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տարբեր նյութերի, ավտոմեքենաների, մեքենա-մեխանիզմների եւ այլ գույքի: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ հեռ. (010) 56-31-15 կամ (010) 56-52-28:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

## Հրեաների մեծ մասը անկարող է ներել գերմանացիներին

Իսրայելցի հրեաների մեծ մասը անհնար է համարում Հոլոքոսթի համար գերմանացիներին ներելը: Այդ մասին հաղորդում է «Հաարեց» թերթը, վկայակոչելով Իսրայելի քաղաքագրության ինստիտուտի անցկացրած սոցիոլոգիական հետազոտության տվյալները:

Այն հարցին, թե «Ժամանա՞կն է արդյոք գերմանացիներին եւ Գերմանիային ներելու Հոլոքոսթի ոճրագործության համար», հրեաների 51 տոկոսը կտրուկ բացասական պատասխան է տվել, 19 տոկոսը՝ մասնակիորեն բացասական պատասխան: Հարցման մասնակիցների 7 տոկոսը դժվարացել է պատասխանել, եւ միայն 23 տոկոսն է կարծիք հայտնել, թե եկել է գերմանացիներին ներելու ժամանակը:

Գերմանիայում հիտլերյան բռնապետության տարիներին ընդունված «Հրեական հարցի վերջնական լուծման» ծրագրի շրջանակներում բնաջնջվեց մոտ 6 մլն հրեա:

## Սարկոզի-Դեւեջյան հակամարտություն

Ֆրանսահայ հայտնի քաղաքական գործիչ Պատրիկ Դեւեջյանի եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջեւ հակադրություն է ծագել: «Ազատություն» ռադիոկայանի Փարիզի թղթակցի տեղեկություններով՝ Ֆրանսիայի նախագահը հոկտեմբերի 15-ին Դեւեջյանին կանչելով Ելիսեյան պալատ, դժգոհել է, թե Դեվեջյանը ցանկություն է ունեցել խանգարելու որդու՝ Ժան Սարկոզիի ընտրությանը «Ժողովրդական շարժում միություն» իշխող կուսակցության ներքին ընտրություններում: Չնայած Դեւեջյանը հերքել է այդ, Սարկոզին շարունակել է դժգոհել՝ խոսելով Դեւեջյանին սպասվելիք մի անակնկալի մասին: Նա ակնարկել է Դեւեջյանի դժգոհությունները, թե Սարկոզին գործադրել է իր ազդեցությունը մտերիմ պատգամավորների վրա՝ Ելիսեյան պալատից արված հեռախոսազանգերով Պատրիկ Դեւեջյանի վերընտրությունը խափանելով կուսակցության Օ դը Սենի համադաշնության նախագահությունում: Պատրիկ Դեւեջյանն այս մասին հարցազրույց է տվել Le Monde-ի նոյեմբերի 20-ի համարում եւ RTL ռադիոկայանին՝ նշելով, որ իր եւ 30 տարվա բարեկամ Սարկոզիի միջեւ կանգնած է Ֆրանսիայի նախագահի որդին՝ Ժան Սարկոզին: Երիտասարդ Սարկոզին նպատակ ունի գրավել Օ դը Սենի խորհրդի նախագահի պաշտոնը, որն այսօր զբաղեցնում է Պատրիկ Դեւեջյանը, երեւի նախագահ Սարկոզիի ասած անակնկալն այս կողմից է գալու:

**Մ. Խ.**

## ԿԺԴՀ-ն հրետակոծել է հարավկորեական կղզին

*Որոշ երկրներ դատապարտել են այդ քայլը*

Հյուսիսկորեական հրետանին երեկ առավոտյան եւ օրվա ընթացքում տասնյակ արկեր է արձակել հարավկորեական Յոնբենդո կղզու վրա: Ռոյթեր գործակալության տվյալներով, կղզու ուղղությամբ արձակվել է առնվազն 200 արկ: Հրետակոծության մասին հաղորդում են նաեւ Ֆրանսպրեսը, մի շարք այլ գործակալություններ: Ֆրանսպրեսի տվյալներով, հրետակոծության հետեւանքով զոհվել է հարավկորեացի 2 զինծառայող, վիրավորվել է 14 զինծառայող (երեքը՝ ծանր): Ավերվել են տասնյակ տներ:

Կղզու բնակիչների թիվը մոտ 1200 է: Հաղորդվում է, որ շատերը կղզուց հեռանում են նավակներով: Հարավկորեական զինված ուժերը բերված են բարձր մարտավիճակի: Կործանիչներ են բերվել Դեղին ծովի ափին գտնվող ռազմակայաններ:

Հարավային Կորեային նախագահ Լի Մեն Բակը պատրաստակամություն է հայտնել ամեն ջանք գործադրել ԿԺԴՀ-ի հետ զինված հակամարտության ընդլայնում թույլ չտալու համար: Այդ մասին նա հայտարարել է հարավկորեացի զորավարների հետ արտակարգ հանդիպման ժամանակ:

Նախագահն ավելացրել է, որ Հվ. Կորեան վճռական հակահարված կտա ԿԺԴՀ սադրանքների շարունակման դեպքում: Հարավկորեական հրամանատարությունը ԿԺԴՀ-ին կոչ է արել անհապաղ դադարեցնել հրետակոծությունը:

Ենթադրվում է, որ ԿԺԴՀ-ի հարձակման առիթը Կորեական թերակղզու արեւմտյան ափի մոտակայքում դադարեցնել հրետակոծությունը:

Ենթադրվում է, որ ԿԺԴՀ-ի հարձակման առիթը Կորեական թերակղզու արեւմտյան ափի մոտակայքում անցկացվող խոշոր զորավարժություններն են, որոնց մասնակցում է մոտ 70 հազար զինծառայող: Ավելի վաղ ԿԺԴՀ-ն բողոքել էր նման զորավարժությունների անցկացման դեմ:

Փորձագետները միջադեպը համարում են վտանգավոր եւ չեն բացառում լայնածավալ հակամարտությունը, քանի որ երկու Կորեաներում էլ լարվածությունը շատ մեծ է:

Ի դեպ, Յոնբենդոյից ոչ հեռու գտնվում է Պեննենդո կղզին, որտեղ մարտի 26-ին հուժկու պայթյունից խորտակվել էր հարավկորեական «Չհոնան» պահականավը: Զոհվել էր 46 նավաստի: Պահականավը կործանվել էր հյուսիսկորեական ականի արձակման հետեւանքով:

Մի շարք երկրներ արդեն դատապարտել են հարավկորեական կղզու հրետակոծությունը: Միջադեպի կապակցությամբ ՌԴ ԱԳՆ-ում Ինտերֆաքսի թղթակցին հայտարարել են, որ կարեւոր են համարում Կորեական թերակղզում լարվածության ծավալում թույլ չտալը: Հրետակոծության կապակցությամբ մտահոգություն են արտահայտել նաեւ ՉԺՀ իշխանությունները: Արտգործնախարարության ներկայացուցիչ Հոնգ Լին մամլո ասուլիսում հայտարարել է, որ երկու Կորեաները պետք է ջանքեր գործադրեն թերակղզում խաղաղությանը նպաստելու համար: Ճապոնիայի կառավարությունը վարչապետի աշխատակազմին առընթեր տեղեկատվական եւ համակարգիչ հատուկ խորհուրդ է ստեղծել Կորեական թերակղզու իրադրությանը հետեւելու նպատակով:

## Կամբոջայում տոնը վերածվեց ողբերգության

Կամբոջայի մայրաքաղաք Պնոմ Պենում ամեն տարի անցկացվող Ջրի տոնը նոյեմբերի 23-ին ողբերգական ավարտ է ունեցել: Այս տարի հանդիսություններին մասնակցում էր մոտ 2 մլն մարդ, այդ թվում՝ հազարավոր զբոսաշրջիկներ: Տոնի բարձրակետը Ադամանդե կղզում կազմակերպված ներկայացումն էր: Սովորաբար նավակների մրցումներին հաջորդում է մեծ համերգը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երեկ համերգից հետո մարդիկ շտապել են դեպի կամուրջ, որպեսզի վերադառնան քաղաքի կենտրոն: Սակայն ինչ-ինչ պատճառներով կամրջի վրա սկսվել են մեծ իրարանցում, հրմշտոց, ծագել է խուճապային վիճակ: Երկրի իշխանությունների տվյալները վկայակոչելով, «Ֆիգարո» թերթի կայքը հաղորդում է, որ զոհվել է 378 մարդ, կա 400-ից ավելի վիրավոր: Շատերի վիճակը ծանր է, այնպես որ զոհերի թիվը կարող է աճել:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: